ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 2025 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑ

Շապիկի վրա օգտագործված է տրանս անձանց առողջապահական իրավունքների և գենդերի վերահաստատման պրակտիկաներին նվիրված արշավի պաստառներից մեկի պատկերը:

Պաստառի հեղինակ՝ Վարդուհի Սուլթանյան

Տարեկան զեկույց. ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների վիճակը Հայաստանում 2025 թ. ընթացքում

Կազմել է «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն՝ Շվեդիայի ֆինանսական աջակցությամբ (մայիս, 2026 թ.):
Նյութի բովանդակության համար պատասխանատու են հեղինակները, և այն պարտադիր չէ, որ արտահայտի Շվեդիայի կառավարության տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ 4

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 6

ԲԱԺԻՆ 1

ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ 8

Պետության պարտավորությունները մարդու իրավունքների ապահովման և խտրականության կանխարգելման ուղղությամբ 9

2025 թ.-ի ընթացքում միջազգային կառույցների և մեխանիզմների կողմից պետությանը ներկայացված հանձնարարականների ընթացքը 10

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 13

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ 18

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ 22

Ընտանեկան բռնություն 23

Ֆիզիկական բռնություն 28

Սեռական բռնություն 31

Շորթում 31

Մասնավոր կյանքին վերաբերող նյութերի տարածում 32

Սպառնալիքներ և այլ տեսակի հոգեբանական բռնություն 32

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՇԱՀՈՒՄ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ 37

ԲԱԺԻՆ 2

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 42

Ա. Ոստիկանության նկատմամբ խորքային անվստահություն 45

Բ. Դեպքերի քննության անարդյունավետություն 46

Գ. Հետագա բռնության կանխարգելման ուղղված միջոցների բացակայություն 47

ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ 48

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒՆ 50

ԲԱԺԻՆ 3

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 52

ՄԻՆԱՍՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ 55

ՓԻՆՔՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ 57

ՀԱՐԶԱԿՈՒՄ ՇՈՒՌՆՈՒԽ ԳՅՈՒՂՈՒՄ 60

ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ 62

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 64

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 68

ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ ԵՎ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Բիսեքսուալ (երկսեռական)	Անհատ, որը զգացմունքային և/կամ սեռական գրավչություն ունի մեկից ավելի սեռերի/գենդերների նկատմամբ:
Գեյ	Նույնասեռական տղամարդ, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի տղամարդու հետ:
Գենդերային արտահայտում	Անձի՝ իր իսկ (կամ այլոց կողմից ընկալվող) գենդերային ինքնության դրսևորումը:
Գենդերային ինքնություն	Անհատի՝ իր իսկ գենդերի ընկալումն է և անհատական փորձը, որը կարող է համապատասխանել կամ չհամապատասխանել ծննդյան ժամանակ հաստատված սեռին: Այն սոցիալական ինքնության կատեգորիա է և վերաբերում է անհատի նույնականացմանը որպես տղամարդ, կին կամ այլ գենդեր:
ԵՄ	Եվրոպայի խորհուրդ
ԼԳԲՏ, ԼԳԲՏ+, ԼԳԲՏԻ	Լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր կամ տրանս, ինտերսեքս («+»-ն օգտագործվում է բոլոր տեսակի ոչ հետերոնորմատիվ ինքնությունները ներառելու նպատակով):
Լեսբի	Նույնասեռական կին, որը խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի կնոջ հետ:
Կոնվերսիոն պրակտիկա	Ցանկացած գործողություն է այլ մարդկանց կողմից, որն ուղղված է մարդու սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության փոփոխությանը՝ ոչ հետերոսեքսուալից դեպի հետերոսեքսուալ, ոչ հետերոնորմատիվ գենդերային ինքնությունից և արտահայտումից դեպքի հետերոնորմատիվ:
Հետերոսեքսուալ (տարասեռական)	Անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի այլ գենդերի անձանց հետ:
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
Հոմոֆոբիա	Վախ, անհիմն զայրույթ, անհանդուրժողականություն կամ ատելություն նույնասեռականության նկատմամբ: Ներառական եզր է. հաճախ ներառում է նաև տրանսֆոբիան (տե՛ս ստորև):

ՄԻԵԴ	Մարդու իրավունքների եվրոպական դատարան
Նույնասեռական	Անհատ, որ խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջություն, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերություններ կամ հարաբերությունների ցանկություն ունի նույն սեռի և/կամ գենդերի անձանց հետ:
ՌԱԵՀ	Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով:
Սեռ	Անհատի կենսաբանական ստատուսն է որպես արական, իգական կամ ինտերսեքս: Որոշվում է այնպիսի չափորոշիչներով, ինչպիսիք են սեռական քրոմոսոմները, գոնադները, արտաքին ու ներքին սեռական օրգանները: Օգտագործվում է նաև որպես անձի ծննդյան պահին արձանագրված սեռ:
Սեռական կողմնորոշում	Անհատի խորը զգացմունքային, հուզական և սեռական գրավչությունների ամբողջությունը, ինչպես նաև ինտիմ և սեռական հարաբերությունները կամ հարաբերությունների ցանկությունը այլ անհատի հետ:
ՍԿԳԻ	Սեռական կողմնորոշում և գենդերային ինքնություն և/կամ գենդերային արտահայտում:
Տրանս կամ տրանսգենդեր	Անձ, ում գենդերային ինքնությունը և/կամ գենդերային արտահայտումը տարբերվում է ծննդյան պահին հաստատված սեռից: Կարող է կիրառվել նաև որպես հովանի եզրույթ՝ ներառելով այլ ոչ հետերոնորմատիվ գենդերային ինքնություններ:
Տրանսֆոբիա	Բացասական մշակութային և անձնական համոզմունքներ, կարծիքներ, վերաբերմունք և վարքագծեր, որոնք հիմնված են տրանս անձանց կամ գենդերային ինքնության և գենդերային արտահայտումների վարիացիաների հանդեպ նախապաշարումների, զզվանքի, վախի կամ ատելության վրա:
Քվիր	Նախկինում դիտվել է որպես ոչ հետերոսեքսուալ կենսակերպ ունեցող անձանց հովանի եզրույթ, իսկ այնուհետև վերածվել հակահինքնության, որը բնութագրում է ցանկացած անձի այնպիսի գործողությունների իրականացումը, որոնք հակառակ են ընդունված նորմերին, լեգիտիմությանն ու դոմինանտությանը, և նպատակ են հետապնդում դիմադրելու, մերժելու, ապակառուցելու և այլաշրջելու նորմալությունն ու հետերոնորմատիվությունը որպես ճնշման համակարգեր: Ներկայումս դիտարկվում է նաև որպես անձանց ինքնություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը ամեն տարի պատրաստում է ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների իրավիճակի մասին զեկույց՝ հիմնված տարվա ընթացքում կազմակերպության մասնագետների կողմից արձանագրված դեպքերի, դրանց վերլուծության, ինչպես նաև օրենսդրական նախաձեռնությունների, փոփոխությունների, դրանց խնդիրների ու հասարակական դիսկուրսի մշտադիտարկման վրա: Զեկույցում ներառվում են նաև կազմակերպության կողմից այդ տարվա ընթացքում ձեռնարկված միջոցները՝ հասցեավորելու համար համակարգային խնդիրները:

Զեկույցի առաջին մասում ներկայացված են կազմակերպության իրավաբանների և սոցիալական աշխատողի կողմից փաստագրված դեպքերը՝ վերլուծական նկարագրությամբ և օրինակներով, դրանց ընթացքը, խնդիրները որոնց մասին վկայում են այդ դեպքերը: 2025 թ. կազմակերպության միայն սոցիալական աշխատողները և իրավաբանները ստացել են 402 դիմում, որոնցից էլ առանձնացվել են իրավախախտման դեպքերը: Դեպքերից բոլորը սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ զուգորդված մարդու իրավունքների խախտումներ են: Այս զեկույցում դեպքերի տարանջատումը՝ ըստ խախտված իրավունքների իրականացվել է նախնական գնահատման հիման վրա և կարող է փոխվել՝ դեպքերի մանրամասն քննության արդյունքում: Այս տարի, մասնավորապես, խախտվել են մարդու՝ խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից զերծ լինելու իրավունքը, մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը: Դրանցից առաջինը դրսևորվել է բանակում անձանց մեկուսացման, խտրականության և բռնության տեսքով, իսկ երկրորդը՝ ընտանեկան բռնության, ֆիզիկական, հոգեբանական և սեռական բռնության, շորթման, մասնավոր կյանքին վերաբերող տվյալների տարածման, ինչպես նաև արտահայտման ազատության չարաշահման տեսքով: Եվս երեք դեպք հանդիսանում են խտրականությամբ զուգորդված աշխատանքային իրավունքի խախտման դեպքեր:

Այսպիսով, արձանագրվել է ընդհանուր առմամբ 56 դեպք, որոնցից 30-ը ընտանեկան բռնության, ներառյալ՝ ընտանիքի անդամների կողմից շարունակական բռնության կամ զուգընկերային բռնության դեպքերն են, 26-ը՝ այլ տեսակի իրավախախտումներ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այս դեպքերից միայն 8-ի պարագայում են տուժողները դիմել իրավապահ մարմիններին և դրանցից միայն մի մասի պարագայում է գործին ընթացք տրվել և քննությունը այժմ գտնվում է դատաքննության փուլում: Մասնավորապես, ընթացք է ստացել ավազակային հարձակման մեկ դեպք, որի պարագայում, այնուամենայնիվ, առանձին քննության չի առնվել տուժողի խոցելի լինելու հանգամանքը և արարքի՝ տուժողի ինքնության նկատմամբ անհանդուրժողականության շարժառիթը: Երկու դեպքերում տուժողները հրաժարվել են բողոքից, իսկ մյուս դեպքերում որևէ տեղեկատվություն չի ստացվել բողոքի հետագա ընթացք մասին:

Զեկույցի երկրորդ բաժինը մանրամասն անդրադառնում է իրավապահ մարմինների կողմից խտրականությամբ և անհանդուրժողականությամբ պայմանավորված իրավախախտումներից տուժող ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ վերա-

բերմունքին՝ հղում կատարելով նաև լիազորությունների անցման դեպքերին: Ներկայացվում է ԼԳԲՏ+ համայնքի կողմից իրավական պաշտպանության միջոցներին չդիմելու պատճառները, նկարագրվում են հիմնական խնդիրները որոնք հանգեցնում են անվստահության մթնոլորտին: Այս տարվա զեկույցում հատուկ ուշադրություն է դարձվել այս խնդրին՝ հաշվի առնելով դեպքերի մասին իրավակիրառ մարմիններին ահազանգելու կարևորությունը և տարեցտարի արձանագրված դեպքերին ի համեմատ ավելի քիչ թվով բողոքներ ներկայացնելու տենդենցը: Մասնավորապես, այս տարի գրանցվել է իրավապահ մարմիններին դիմելու ամենաքիչ թիվը՝ ի համեմատ նախորդ տարիների: Բաժինը ամփոփվում է հատկապես իրավակիրառ մարմինների նկատմամբ վստահությունը վերականգնելուն և տուժողների համար ապահով միջավայր ձևավորելուն ուղղված կոնկրետ քայլերի առաջարկներով:

Զեկույցի երրորդ բաժինը վերաբերում է կազմակերպության կողմից վարվող ռազմավարական դատավարությունների ընթացքին, որոնք 2025 թ.-ի ընթացքում որոշակի զարգացում են ունեցել: Ռազմավարական դատավարությունները հանդիսանում են մեր կողմից ԼԳԲՏ+ անձանց իրավունքների համապարփակ պաշտպանությանն ուղղված ջատագովության անբաժան և կարևոր մասը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դրանք հիմնված են առավելապես աղմուկ բարձրացրած դեպքերի վրա, որոնք ցայտուն կերպով մատնանշում են համակարգային խնդիրներ՝ ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական մակարդակներում:

Զեկույցի վերջում, ինչպես ամեն տարի, որոշակի իրավիճակային զարգացումնե-րի նկատառմամբ ներկայացված են առաջարկներ թե պետական մարմիններին, թե միջազգային կառույցներին, լրատվամիջոցներին և մարդու իրավունքների պաշտպանին: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ պետական կառույցների քաղաքականության նկատմամբ կարևոր ազդեցություն ունեն **մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ վերահսկողության մանդատ** ունեցող միջազգային կառույցները, իսկ մարդու իրավունքների պաշտպանն ունի հստակ, Սահմանադրությունից բխող լիազորություններ՝ վերահսկողություն իրականացնելու պետական մարմինների կողմից մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և պաշտպանության մակարդակի նկատմամբ: Լրատվամիջոցները հաճախ հանդիսանում են անհանդուրժողա-կանություն և ատելություն սերմանող խոսքի տարածման առաջնային օղակը, հետևաբար, դրանց ուղղված առաջարկները ևս կարևոր նշանակություն ունեն հանրային դիսկուրսից մարդու արժանապատվության և մասնավոր կյանքի նկատմամբ ոտնձգող խոսքի հնարավորինս բացառման առումով:

Զեկույցի այս կառուցվածքը հնարավորություն է տալիս համեմատականներ տանել նախորդ տարիներին արձանագրված իրավիճակի հետ և գնահատել թե դրական թե բացասական տենդենցները:

ԲԱԺԻՆ 1.
ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մարդու իրավունքները համընդհանուր, անքակտելի և անփոխանցելի են: Յուրաքանչյուր անձ, անկախ իր անձնական, սոցիալական կամ այլ կարգավիճակից, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների կրող է իր ծննդյան պահից մինչև կյանքի ավարտը: Որպես իրավական պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը (ՀՀ) պարտավոր է ապահովել իր տարածքում գտնվող բոլոր անձանց իրավունքների լիարժեք և անխափան իրացումը:

Մարդու իրավունքների ապահովումը պետության կողմից չի սահմանափակվում միայն պետական մարմինների գործունեության վերահսկմամբ կամ պետական պաշտոնատար անձանց կողմից թույլ տրվող խախտումների կանխարգելմամբ: Այն ներառում է նաև պետության պարտավորությունը՝ պատշաճ արձագանքելու և կանխելու երրորդ անձանց կողմից իրականացվող ոտնձգությունները մարդու իրավունքների նկատմամբ:

Մարդու իրավունքների պաշտպանության միջազգային փաստաթղթերը, ինչպես նաև դրանց հիման վրա գործող դատական և արտադատական մեխանիզմների ձևավորված պրակտիկան, հստակ սահմանում են այն միջոցառումների շրջանակը, որոնք պետությունը պարտավոր է ձեռնարկել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության և իրացման համար: Այդ միջոցառումները ներառում են ինչպես պետության նեգատիվ, այնպես էլ պոզիտիվ պարտավորությունները:

ՀՀ-ում մարդու իրավունքների պաշտպանության առաջնային երաշխավորը ՀՀ Սահմանադրությունն է, որը ամրագրում է մարդու իրավունքների անմիջական գործողության սկզբունքը:[1] Միաժամանակ, մարդու իրավունքների գերակայությունը ճանաչված և երաշխավորված է նաև ՀՀ կողմից վավերացված միջազգային պայմանագրերով և դաշնագրերով:[2]

Մասնակցելով միջազգային կազմակերպությունների գործունեությանը, մասնավորապես՝ Միավորված ազգերի կազմակերպությանը և Եվրոպայի խորհրդին, ինչպես նաև վավերացնելով այդ կառույցների շրջանակներում ընդունված հիմնարար փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է կոնկրետ միջազգային պարտավորություններ մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Այդ պարտավորությունների կատարման վերաբերյալ պետությունը պարբերաբար հաշվետու է համապատասխան միջազգային մարմինների առաջ:

ՄԱԿ-ի շրջանակներում գործում են մարդու իրավունքների պայմանագրային մարմինները՝ 10 կոմիտեներ, որոնք ձևավորվել են տարբեր միջազգային դաշնագրերի հիման վրա: Այդ կոմիտեները գնահատում են պետությունների ներկայացրած պարբերական զեկույցները, ինչպես նաև քննում են անհատական դիմումներ անձանց կողմից իրենց իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ: Բացի այդ, ՄԱԿ-ի համակարգում գործում են հատուկ ընթացա-

1 Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 3, կետ 3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723
2 Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 5, կետ 3. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723

կարգերը և անկախ փորձագետները, որոնք իրենց մանդատի շրջանակներում կարող են պետություններից պահանջել տեղեկատվություն մարդու իրավունքների վիճակի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:

2025 Թ.-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԳԲՏ+ ԱՆՁԱՆՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Միավորված ազգերի կազմակերպության Համընդհանուր պարբերական դիտարկման (ՀՊԴ) չորրորդ շրջափուլի արդյունքում ամփոփվել են այլ պետությունների կողմից ՀՀ-ը ներկայացված առաջարկները՝ ուղղված մարդու իրավունքների պաշտպանության մակարդակի բարելավմանը:[3]

«Փինք» իրավապաշտպան ՀԿ-ն դիտարկման գործընթացին մասնակցել է երրորդ անգամ՝ ներկայացնելով ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության առկա խնդիրները և առաջարկություններ՝ խտրականության դեմ պայքարի, ատելության շարժառիթով հանցագործությունների ու բռնության և ատելության խոսքի կանխարգելման, ինչպես նաև տրանս անձանց առողջապահական կարիքների օրենսդրական կարգավորման վերաբերյալ:

Հատկանշական է, որ շուրջ մեկ տասնամյակ միջազգային կառույցների և պետությունների կողմից Հայաստանին պարբերաբար առաջարկվում է ընդունել խտրականության դեմ համապարփակ օրենսդրություն՝ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը ներառելով որպես խտրականությունից պաշտպանված հատկանիշներ և ապահովելով ԼԳԲՏ+ անձանց արդյունավետ պաշտպանությունը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում դրսևորվող խտրականությունից: Միևնույն ժամանակ, «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագիծը, չնայած բազմիցս քննարկվել և փոփոխվել է, մինչ օրս չի նախատեսում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության (ՍԿԳԻ) հիմքով խտրականությունից ուղղակի և հստակ պաշտպանություն:

Կառավարությունը ՀՊԴ-ի շրջանակում ներկայացված առաջարկներին արձագանքել է՝ նշելով, որ «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակված է և ներկայացված է Ազգային ժողովի քննարկմանը:[4] Սակայն հարկ է նշել, որ նշված օրենքի ընդունումը նախատեսված էր 2024 թ-ի երկրորդ կիսամյակում՝ համաձայն Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի: Այնուամենայնիվ, տեղեկություն է ստացվել, որ նախագիծը Ազգային ժողով կուղարկվի 2026 թ-ի առաջին կիսամյակում:

Առաջարկությունների շարքում ընդգծվել է նաև ՍԿԳԻ հիմքով ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների արդյունավետ քննության ապահովման անհրաժեշտությունը, այդ թվում՝ համապատասխան օրենսդրա-

3 ՄԱԿ Համընդհանուր պարբերական դիտարկման ախատանքային խմբի զեկույց. https://upr-info.org/sites/default/files/country-document/2025-09/A_HRC_60_11_E.pdf (անգլերեն)
4 Հայաստանի արձագանքը ներկայացված առաջարկներին. https://upr-info.org/sites/default/files/country-document/2025-09/A_HRC_60_11_Add.1_E.pdf

կան բարեփոխումների միջոցով: Կառավարությունը հավանության է արժանացրել այս առաջարկը՝ նշելով, որ ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է հանցավորի ատելության շարժառիթը՝ որպես ծանրացուցիչ հանգամանք:

Սակայն նոր քրեական օրենսգրքով նախատեսված կարգավորումների կիրառման պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՍԿԳԻ պայմանավորված ատելության շարժառիթը մինչ օրս չի որակվում որպես ծանրացուցիչ հանգամանք, իսկ համապատասխան դեպքերը չեն ենթարկվում պատշաճ և արդյունավետ քննության: Այս համատեքստում կարևոր է ընդգծել, որ Կառավարությունը չպետք է սահմանափակվի օրենսդրական փոփոխությունների առկայության վերաբերյալ հայտարարություններով, այլ պարտավոր է ձեռնարկել կոնկրետ միջոցներ՝ ապահովելու այդ նորմերի հետևողական և արդյունավետ կիրառումը:

ՀՊԴ-ի շրջանակում առաջարկվել է նաև վերացնել անձը հաստատող փաստաթղթերում տրանս անձանց գենդերի նշման փոփոխության համար սեռափոխության պարտադիր պայմանը՝ գործընթացը հիմնադրելով ինքնորոշման սկզբունքի վրա: Կառավարությունը տվյալ առաջարկը չի մերժել, սակայն այն ընդունել է ի գիտություն՝ առանց որևէ պարզաբանման կամ գործողության պլանի:

Նշենք, որ ԼԳԲՏ+ անձանց խտրականությունից, բռնությունից և ատելության խոսքից պաշտպանությանը վերաբերող առաջարկների թիվը ՀՊԴ չորրորդ շրջափուլում զգալիորեն աճել է՝ հասնելով 24-ի: Նման առաջարկներով հանդես են եկել մի շարք պետություններ, այդ թվում՝ Կուբան, Շվեդիան, Պորտուգալիան, Չեխիան, Ուրուգվայը, Նորվեգիան, Չիլին, Ավստրալիան, Միացյալ Թագավորությունը, Ավստրիան, Լյուքսեմբուրգը, Իռլանդիան, Շվեյցարիան, Բրազիլիան, Մոնտենեգրոն, Մալթան, Կանադան, Բելգիան, Մեքսիկան, Նիդերլանդները, Իսպանիան և Կոլումբիան:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) հրապարակել է 2024 թվականի ընթացքում արձանագրված ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տարեկան զեկույցը, որը ներառում է նաև Հայաստանի Հանրապետությունում արձանագրված տվյալները:[5]

Զեկույցի համաձայն՝ Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից փաստագրվել է ատելության հիմքով հանցագործությունների 49 դեպք, մինչդեռ պետական մարմինների կողմից արձանագրվել է ընդամենը 6 դեպք: Իրավապահ մարմինների կողմից գրանցված վեց դեպքերից չորսի առթիվ հարուցվել է քրեական վարույթ, որոնցից միայն մեկն է ավարտվել դատավճռի կայացմամբ:

Պետության կողմից ներկայացված դեպքերից մեկի պարագայում արձանագրվել է ֆիզիկական բռնություն՝ ԼԳԲՏ+ անձի նկատմամբ ատելության շարժառիթով, երկու դեպքերի պարագայում ատելության շարժառիթը ենթադրաբար պայմանավորված է եղել ռասիզմով, իսկ մեկ դեպքում արձանագրվել է հակասեմականության շարժառիթ: Զեկույցում նշվում է, որ նախորդ տարիներին պետության կողմից ներկայացված դեպքերի ավելի մեծ թվաքանակը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ նախկինում հաշվառվել են նաև

5 ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ տարեկան զեկույց. https://hatecrime.osce.org/incidents?country=AM&year=2024 (անգլերեն)

բռնության կոչերի, ատելության և խտրականության հրահրման դեպքերը, որոնք ներկայումս այլևս չեն ներառվում նույն շրջանակում:

Միևնույն ժամանակ, զեկույցում անդրադարձ է կատարվում պետության կողմից ձեռնարկված որոշ դրական քայլերին օրենսդրական և քաղաքականության ոլորտներում: Մասնավորապես, Մարդու իրավունքների ազգային ռազմավարությունից բխող 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով նախատեսվում է մշակել ուղեցույց քննիչների, ոստիկանների և դատախազների համար՝ ատելության հիմքով հանցագործությունների, ատելության խոսքի և խտրականության դեպքերի քննության առանձնահատկությունների վերաբերյալ: Բացի այդ, 2024 թվականին ուժի մեջ է մտել ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխությունը, որով ծանրացնող հանգամանքների շարքում ներառվել է նաև զուգընկերոջ կողմից բռնությունը: Նշված փոփոխությունը հնարավորություն է ստեղծում առավել համաչափ պատասխանատվություն սահմանելու այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են սեռի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով:

Զեկույցում ներկայացված քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից փաստագրված 49 դեպքերից 46-ի տուժողները եղել են ԼԳԲՏ+ անձինք: Որոշ դեպքեր նաև որակվել են որպես գենդերով պայմանավորված ատելության հիմքով հանցագործություններ, ինչը վկայում է խտրականության բազմաշերտ բնույթի և խոցելի խմբերի նկատմամբ ուղղված բռնության համակարգային խնդիրների մասին: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ ատելության հիմքով հանցագործությունների հավաքագրման ու հիմքերի նշման հարցում շարունակում է անհամապատասխանություն դիտվել պետության մեխանիզմների ու քաղաքացիական հասարակության մոտեցումների միջև, որը հնարավորություն չի ընձեռում իրավիճակի նույնական հասկացման, կատարվող օրենսդրական ու մեխանիզմների մակարդակում փոփոխությունների ընթացքի մշտադիտարկման ու արդյունավետության համար:

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Խտրականությունից զերծ լինելու իրավունքը մարդու հիմնարար և բացարձակ իրավունքներից է, որը չի կարող ենթարկվել որևէ սահմանափակման՝ նույնիսկ արտակարգ իրավիճակներում: Այդ իրավունքը ամրագրված է մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված առանցքային միջազգային փաստաթղթերում,[6] ինչպես նաև Սահմանադրությունում՝ որպես իրավական պետության հիմնասյուներից մեկը:Խտրականության արգելքը ոչ միայն իրավական նորմ է, այլև ժողովրդավարական հասարակության արժեքային առանցք, որի խախտումը հանգեցնում է սոցիալական մեկուսացման, անհավասարության և համակարգային անարդարության խորացման:

Մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հիմնական փաստաթղթերը միանշանակորեն ամրագրում են այն սկզբունքը, որ բոլոր իրավունքներն ու ազատությունները պետք է իրացվեն առանց որևէ խտրականության: Այս դրույթը վկայում է խտրականությունից զերծ լինելու իրավունքի համամարդկային բնույթի և դրա առանձնահատուկ արժեքի մասին՝ որպես մարդկային արժանապատվության անբաժանելի տարր:

Միջազգային իրավունքի համաձայն՝ խտրականությունը մեկնաբանվում է որպես ցանկացած տարբերակում, բացառություն կամ նախապատվություն, որը հիմնված է որոշակի հատկանիշի կամ հանգամանքի վրա և որի նպատակը կամ հետևանքը անձի իրավունքների ու ազատությունների ճանաչման, վայելման կամ իրացման սահմանափակումն է:[7] Այլ կերպ ասած՝ խտրականությունն արտահայտվում է այն դեպքում, երբ համադրելի իրավիճակում գտնվող անձինք ենթարկվում են տարբեր վերաբերմունքի՝ առանց ողջամիտ և օբյեկտիվ հիմնավորման:[8] Նման տարբերակումը հատկապես վտանգավոր է, երբ այն կրում է համակարգային բնույթ և վերարտադրվում է պետական քաղաքականությունների, օրենսդրության կամ գործելակերպի միջոցով:

Միջազգային իրավունքում տարբերակվում են խտրականության մի քանի տեսակներ: Ուղղակի խտրականությունն առկա է այն դեպքում, երբ անձը իր որևէ անձնական, սոցիալական կամ այլ հատկանիշի պատճառով արժանանում է պակաս նպաստավոր վերաբերմունքի, քան նույն իրավիճակում գտնվող այլ անձինք:[9] Անուղղակի խտրականությունը դրսևորվում է այն ժամանակ,

6 Տե՛ս ՄԱԿ-ի կանոնադրություն, Հոդված 1 (3) և 55, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 7. ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիր, հոդված 2, 4 (1) և հոդված 26, ՄԱԿ-ի Սոցիալ-տնտեսական և մշակութային իրավունքների մասին դաշնագիր, հոդված 2, Երեխաների իրավունքների պաշտպանության կոնվենցիա, հոդված 2, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիա, հոդված 14, և դրան կից 12-րդ արձանագրություն.
7 ՄԱԿ-ի Մարդու իրավունքների կոմիտեի թիվ 18 ընդհանուր մեկնաբանություն, § 7. https://www.refworld.org/docid/453883fa8.html (անգլերեն)
8 Մարդու իրավունքների եվրոպական դատարան, Բելգիայում կրթության մեջ լեզուների օգտագործման մասին օրենքի որոշ ասպեկտների վերաբերյալ գործով 23.07.1968թ-ի վճիռ, Վիլիսն ընդդեմ Միացյալ Թագավորության, թիվ 36042/97, § 48, ՄԻԵԴ 2002-IV, Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով վճիռ, թիվ. 40094/05, 02/01/2013.
9 Հակախտրականությունը միջազգային իրավունքում. 2012-ի ձեռնարկ, պ. 17-18. https://www.interights.org/handbook/index.html (անգլերեն)

երբ առերևույթ չեզոք նորմը, չափանիշը կամ գործելակերպը փաստացիորեն անհամաչափորեն բացասական ազդեցություն է ունենում որոշակի խմբի վրա:[10] Առանձին ուշադրության է արժանի նաև ասոցացված խտրականությունը, երբ խտրական վերաբերմունքի է ենթարկվում այն անձը, որը ինքնին չի կրում պաշտպանվող հատկանիշը, սակայն ունի սերտ կապ այդ հատկանիշը կրող անձի հետ, օրինակ՝ ընտանիքի անդամ կամ զուգընկեր է:[11] Այս տեսակները ցույց են տալիս, որ խտրականությունը կարող է ունենալ ոչ միայն ակնհայտ, այլև թաքնված ու բարդ դրսևորումներ:

Խտրականությունը միշտ պայմանավորված է որոշակի հատկանիշով, որը կոչվում է խտրականության հիմք: Թեև ո՛չ ՀՀ Սահմանադրությունը, ո՛չ ներպետական օրենսդրությունը և ո՛չ էլ միջազգային պայմանագրերի մեծ մասի հիմնական տեքստը ուղղակիորեն չեն հիշատակում ՍԿԳԻ-ն որպես պաշտպանվող հիմքեր, այդ ցանկերը, որպես կանոն, բաց են: Սա նշանակում է, որ իրավական համակարգը չի սահմանափակում խտրականության հիմքերի շրջանակը միայն թվարկված հատկանիշներով, այլ հնարավորություն է տալիս ներառել նաև այլ անձնական կամ սոցիալական բնույթի հանգամանքներ: Այդ համատեքստում ՍԿԳԻ-ն պետք է դիտարկվեն որպես խտրականությունից պաշտպանվող հատկանիշներ՝ հավասարապես սեռի, ռասայի, հաշմանդամության և այլ հիմքերի հետ: Մարդու իրավունքների պայմանագրերի վերահսկողական մարմինները բազմիցս ընդգծել են, որ ՍԿԳԻ-ն ամբողջությամբ տեղավորվում է խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շրջանակում, և դրանց բացառումը հակասում է միջազգային չափորոշիչներին:[12]

Այսպիսով, ՀՀ-ն պետք է երաշխավորի, որ ԼԳԲՏ+ անձինք պաշտպանված են պետական մարմինների ներկայացուցիչների՝ ներառյալ կառավարության, ոստիկանության և քննչական մարմինների աշխատակիցների կողմից հնարավոր կամ իրական ոտնձգություններից: Սակայն հավասարության ապահովումը չի սահմանափակվում միայն պետական միջամտությունից զերծ մնալով: Պետությունն ունի նաև դրական պարտավորություն՝ ստեղծելու այնպիսի իրավական և սոցիալական միջավայր, որտեղ մասնավոր անձինք ևս չեն կարող անպատժելիորեն խախտել ԼԳԲՏ+ անհատների իրավունքները՝ նրանց ՍԿԳԻ պատճառով: Նման խախտումների բոլոր դեպքերը պետք է ենթարկվեն արդյունավետ, արագ և անկողմնակալ քննության, իսկ մեղավորները՝ ենթարկվեն համաչափ պատասխանատվության:

Չնայած այն հանգամանքին, որ խտրականության արգելքի վերաբերյալ առանձին դրույթներ առկա են մի շարք ոլորտային օրենքներում, ՀՀ-ում դեռևս բացակայում է խտրականության դեմ պայքարին նվիրված համապարփակ և ինքնուրույն օրենք:[13] Նման օրենքը պետք է հստակ սահմանի խտրականության

10 ԵՄ Եվրոպական խորհրդի հրաման 2000/43/EC, 29.06.2000, Հավասար վերաբերմունքի սկզբունքի կիրառումը անձանց միջև՝ անկախ ռասայական կամ էթնիկ ծագումից, հոդված 2(2), կետ (b). https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=celex%3A32000L0043 (անգլերեն)

11 Մոլա Սալին ընդդեմ Հունաստանի, ՄԻԵԴ Մեծ պալատ, 2018; ՄԻԵԴ վճիռներ Գուբերնիան ընդդեմ Խորվաթիայի, 2016, § 78; Սկորյանեցն ընդդեմ Խորվաթիայի, 2017, § 55; Վելերն ընդդեմ Հոնգարիայի, 2009, § 37.

12 ՄԻԵԴ վճիռներ. Իդեմտոբան և այլոք ընդդեմ Վրաստանի, 2015, § 96; Սալգիրո դը Սիլվա Մուտան ընդդեմ Պորտուգալիսայի, 1999, § 28; Ֆղետեն ընդդեմ Ֆրանսիայի, 2002, § 32; Վեջելանդը և այլոք ընդդեմ Շվեդիայի, 2012, § 55; Խոշտանգումների դեմ կոմիտեի ընդհանուր մեկնաբանություն թիվ 2 հոդված 2-ի կիրառումը անդամ պետությունների կողմից, § 21, 22. https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/catcgc2-general-comment-no-2-2007-implementation (անգլերեն)

13 Խտրականության առանձին օրենքի անհրաժեշտության վերաբերյալ հետազոտություն. https://epfarmenia.am/hy/document/Is-it-expedient-to-adopt-separate-non-discrimination-law (անգլերեն)

հասկացությունը, դրա տեսակները և ապահովի արդյունավետ պաշտպանության մեխանիզմներ խտրականության նկատմամբ առավել խոցելի խմբերի համար: Մասնավորապես, այդ օրենքը պետք է՝

- հստակորեն ներառի սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը խտրականությունից պաշտպանվող հատկանիշների շարքում՝ հաշվի առնելով այդ հիմքերով պայմանավորված իրավախախտումների տարածվածությունը,
- սահմանի խտրականության տեսակների համապարփակ և ոչ սահմանափակիչ ցանկ,
- իրավասություն տա հասարակական կազմակերպություններին հանրային շահի պաշտպանության հայցերով դիմելու դատարան՝ իրենց շահառուների իրավունքները արդյունավետ պաշտպանելու նպատակով,
- նախատեսի անկախ և արդյունավետ հավասարության մարմնի ձևավորում՝ Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից դուրս, ապահովելով դրա անդամների բազմազան և ներառական կազմ,
- տարածի խտրականությունից պաշտպանության մեխանիզմները նաև մասնավոր ոլորտի վրա,
- սահմանի ապացուցման բեռի բաշխման հատուկ կանոններ՝ պարտավորեցնելով ենթադրյալ խտրականություն իրականացրած կողմին ապացուցել խտրական շարժառիթի բացակայությունը:

«Իրավահավասարության ապահովման և խտրականությունից պաշտպանության մասին» օրենքի նախագիծը երկար տարիներ գտնվում է օրակարգում, սակայն մինչ օրս չի համապատասխանում միջազգային չափորոշիչներին և հատկապես ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության տեսանկյունից մնում է թերի: 2025 թվականի ընթացքում նախագծի շուրջ քննարկումները փաստացիորեն չեն կայացել: Հայտնի է, որ նախագիծը 2026 թվականի սկզբին նախատեսվում է ուղարկվել Ազգային ժողով, սակայն դրա հիմնական խնդիրները շարունակում են մնալ չլուծված, այդ թվում՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության բացառումը պաշտպանվող հատկանիշների ցանկից, կազմակերպությունների դատական դիմելու իրավունքի բացակայությունը և հավասարության մարմնի ոչ արդյունավետ կարգավիճակը: Նախագիծը այժմ կրում է «Խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին օրենք» անվանումը, ինչը դրական տեղաշարժ է այն առումով, որ ուղղակիորեն կոչվում է ապահովելու խտրականությունից պաշտպանությունը որպես այդպիսին՝ միջազգայնորեն ճանաչված սահմանումից բխող շրջանակներում և ոչ որպես մասնակիորեն իրավահավասարության մասով:

Սույն զեկույցում ներկայացված մարդու իրավունքների խախտումները կրում են խտրական բնույթ, քանի որ դրանք ուղղակիորեն կամ անուղղակիորեն պայմանավորված են տուժողների ՍԿԳԻ-ով: Ստորև ներկայացվող օրինակներում իրավախախտումները դասակարգված են ըստ խախտված իրավունքների, սակայն զեկույցում հիշատակված բոլոր դեպքերում առկա է խտրականության տարրը՝ որպես այդ խախտումների հիմնական շարժառիթ և խորքային պատճառ:

Բռնություն չհանդիսացող խտրականության դեպքերը՝ արձանագրված 2025 թ.-ի ընթացքում

Արձանագրվել է 3 դեպք, երբ անձի աշխատանքային իրավունքը խախտվել է իր ՍԿԳԻ հիմքով: ՀՀ Սահմանադրության 57-րդ հոդվածը սահմանում է յուրաքանչյուր անձի աշխատանքի ազատ ընտրության և աշխատանքից անհիմն ազատվելու դեպքում պաշտպանության իրավունք:[14] Յուրաքանչյուրը կարող է ընտրել իր ցանկացած մասնագիտությունը, զբաղվել իր նախընտրած աշխատանքով: Գործատուի և աշխատողի հարաբերությունները հիմնվում են կայունության սկզբունքի վրա, ուստի աշխատանքից առանց հիմքերի ազատման դեպքում աշխատակիցը կարող է դատական կարգով պաշտպանել իր իրավունքները: Որպես աշխատանքային հարաբերությունների կայունության երաշխիք՝ պետությունը աշխատանքից ազատման հիմքերի նախատեսումը չի թողնում կողմերի հայեցողությանը՝ խուսափելու համար կամայականություններից, այլ սահմանում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով:[15]

Արձանագրված դեպքերի համակցված վերլուծությունը և նախորդ տարիներին արձանագրված համանման դեպքերի հետ համադրումը ցույց է տալիս, որ աշխատանքային հարաբերություններում ՍԿԳԻ հիմքով խտրականությունը Հայաստանում ունի կայուն և համակարգային բնույթ: Խախտումները դրսևորվում են ինչպես աշխատանքի ընդունման փուլում, այնպես էլ արդեն ձևավորված աշխատանքային հարաբերությունների ընթացքում՝ հանգեցնելով աշխատանքից հեռացման, մասնագիտական մեկուսացման և սոցիալ-տնտեսական խոցելիության խորացման:

Դեպքերը վկայում են, որ գենդերային ինքնության կամ գենդերային արտահայտման հիմքով անձինք մերժվում են աշխատանքի ընդունվել առանց որևէ մասնագիտական կամ գործառնական հիմնավորման: Նման մոտեցումը փաստացիորեն փակուղի է ստեղծում հատկապես տրանս անձանց համար, որոնց համար աշխատանքի շուկան դառնում է գրեթե անհասանելի: Սա խախտում է աշխատանքի իրավունքի իրացման հավասար հնարավորությունները և նպաստում է սոցիալական բացառմանը:

Մեկ այլ դեպքում, սեռական կողմնորոշման կամ անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումից հետո աշխատանքային հարաբերությունները արհեստականորեն լարվել են և ավարտվել աշխատանքից հեռացմամբ՝ առանց պատշաճ հիմնավորման, նախազգուշացման կամ իրավաչափ ընթացակարգի: Այս պրակտիկան վկայում է աշխատանքային օրենսդրության պահանջների անտեսման և խտրական դրդապատճառներով պայմանավորված կամայական որոշումների մասին:

Աշխատավայրում խտրական վերաբերմունքը հաճախ արտահայտվում է ոչ միայն ուղղակի մերժմամբ կամ հեռացմամբ, այլև շարունակական հոգեբանական ճնշմամբ, կոպիտ վերաբերմունքով և նվաստացուցիչ մեկնաբանություններով: Նման թշնամական միջավայրը անձանց դուրս է մղում աշխատավայրից և փաստացի խաթարում է արժանապատիվ աշխատանքի իրավունքը:

---

14 Տե՛ս ՀՀ սահմանադրություն, 2015 թ. փոփոխություններով, հոդված 57. https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=143723

15 Տե՛ս ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդվածներ 109-114. https://www.arlis.am/documentview.aspx?docid=146722

Մեկ այլ դեպքում գործատուն անօրինականորեն միջամտել է աշխատողի անձնական կյանքին՝ աշխատանքային ժամից դուրս նրա հարաբերությունները կամ վարքագիծը գնահատելով որպես «անհամապատասխան» աշխատավայրի հեղինակությանը: Նման մոտեցումը հակասում է անձնական կյանքի անձեռնմխելիության հիմնարար սկզբունքներին:

Արձանագրված դեպքերին բնորոշ է այն հանգամանքը, որ տուժողները չեն դիմում իրավական պաշտպանության մեխանիզմներին: Սա պայմանավորված է միաժամանակ մի քանի գործոններով՝

- հակախտրական հստակ օրենսդրության բացակայություն,
- ապացուցման բեռի՝ ամբողջությամբ տուժողի վրա դրված լինելը, որը հիմնականում անհնար է դարձնում խտրականության դեպքի ապացուցումը՝ հաշվի առնելով գործատուի՝ առավել մեծ ռեսուրսների կրող լինելը և աշխատանքի չընդունելու կամ աշխատանքից հեռացնելու պատրվակների բազմազան հիմնավորումների հնարավորությունը,
- դատարանների և իրավապահ մարմինների նկատմամբ անվստահությունը, ինչը ներառում է և դեպքերի քննության գործընթացների արդյունավետության վերաբերյալ կասկածը և անձնական տեղեկատվության բացահայտման վախը:

Աշխատանքային իրավունքների խախտումը հանգեցնում է նաև անմիջական սոցիալ-տնտեսական հետևանքների:

Եկամտի կորստի, երկարատև գործազրկության և սոցիալական անապահովության ռիսկը հատկապես խորացնում է ԼԳԲՏ+ անձանց խոցելիությունը և կախվածությունը ոչ ֆորմալ կամ վտանգավոր զբաղվածությունից:

Դեպքերը ևս մեկ անգամ ընդգծում են, որ գործող աշխատանքային օրենսդրությունը և գործատուների վերահսկողության մեխանիզմները բավարար չեն խտրականության կանխարգելման և պատժման համար: Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության բացակայությունը որպես հստակ պաշտպանվող հատկանիշներ նպաստում է գործատուների անպատժելիությանը և իրավական անորոշությանը:

ԽՈՇՏԱՆԳՈՒՄՆԵՐԻՑ ԿԱՄ ԱՆՄԱՐԴԿԱՅԻՆ, ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՑՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻՑ ՁԵՐԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնատար անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմամբ և գիտությամբ կամ լռելյայն համաձայնությամբ, որևէ անձին մտածված կերպով հասցվում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանից կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորզելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խտրականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով: Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն: Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման: Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգամանքները,[16] ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական կարգավիճակը:[17] Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը, անմարդկային վերաբերմունքը և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վնասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ,[18] իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ:[19] Երբ անձին ֆիզիկական կամ հոգեկան տառապանք պատճառելը բավարար ծանրության չի հասել կամ չի հետապնդել խոշտանգման սահմանմամբ նախատեսված նպատակ, ապա խոսքը գնում է անմարդկային վերաբերմունքի մասին: Որոշ դեպքերում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունը, սպառնալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք են համարվում:[20] Այս դեպքերում անհրաժեշտ չէ

16 ՄԻԵԴ վճիռ թիվ 2346/02, §49. Փրեթթին ընդդեմ Միացյալ Թագավորության
17 ՄԻԵԴ վճիռ թիվ 33394/96. Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության; ՄԻԵԴ վճիռ թիվ 13134/87, §30. Կոստելլո-Ռոբերթսն ընդդեմ Միացյալ Թագավորության
18 ՄԻԵԴ վճիռ թիվ 23178/94, Այդինն ընդդեմ Թուրքիայի
19 ՄԻԵԴ թիվ 4715/70, 4783/71 և 4827/71 գործեր. Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության
20 ՄԻԵԴ թիվ 33985/96 և 33986/96 գործեր. Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության

պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար:[21]

Սույն իրավունքի խախտմամբ արձանագրվել են խտրականության և բռնության դեպքեր բանակում

Մի դեպքում անձի սեռական կողմնորոշման բացահայտումից հետո նրան տեղափոխել են հոգեկան առողջության կենտրոն, որտեղ նա մի քանի ամիս բուժում է ստացել: Տանը դիմողը ևս ենթարկվել է բռնության ու հոգեբանական ճնշումների հոր կողմից:

Մեկ այլ դեպքում նույնասեռական անձի սեռական հարաբերությունների վերաբերյալ տեսանյութը տարածվել է զորամասում, ինչից հետո նրան տեղափոխել են այդտեղից, այնուհետև համագյուղացիները եկել են զորամաս, վիրավորել են նրան, սպառնացել, որ զորացրվելուց հետո հանկարծ գյուղ չմտնի, հակառակ դեպքում կվնասեն:

Երկու դեպքում էլ տուժողները հրաժարվել են դիմել իրավապահ մարմիններին, ինչը վկայում է խորքային անվստահության մասին, որն առաջացել է խտրական վերաբերմունքի, անարդյունավետ արձագանքի և կրկնազոհացման վախի պատճառով:

Այսպիսով, զինվորական ծառայության ընթացքում անձի սեռական կողմնորոշումը դիտարկվում է ոչ թե որպես անձնական կյանքի մաս, այլ որպես «խնդիր», «շեղում» կամ «վտանգ» զինվորական կարգապահության համար: Սա արտահայտվում է մի քանի փոխկապակցված պրակտիկաներով, որոնց մասին այս եզրահանգումը հիմնված է ոչ միայն այս տարվա ընթացքում արձանագրված երկու դեպքերի, այլ նաև նախորդ տարիների նույնատիպ դեպքերի վրա: Դրանք են՝

- սեռական կողմնորոշման բացահայտումից հետո անձանց մեկուսացումը,
- նրանց նկատմամբ հոգեբանական և սոցիալական ճնշումը,
- նույնասեռականության փաստացի հավասարեցումը հոգեկան առողջության խնդրի հետ: Նույնասեռական անձանց հոգեկան առողջության հաստատություններ ուղղորդելը վկայում է բժշկական ոլորտում առկա հնացած և խտրական մոտեցումների մասին, որոնք հակասում են միջազգային բժշկական և մարդու իրավունքների չափորոշիչներին:
- անձնական կյանքի վերաբերյալ տվյալների չպաշտպանված շրջանառություն և տարածում զինվորական միջավայրում: Տեսանյութերի տարածումը և սեռական կողմնորոշման մասին տեղեկատվության շրջանառությունը զինվորական ստորաբաժանումներում ցույց են տալիս, որ չեն գործում անձնական տվյալների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ:

21 ՄԻԵԴ վճիռ թիվ 28524/95. Փիրսն ընդդեմ Հունաստանի, ինչպես նաև խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՄԱԿ-ի Հատուկ զեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001 թ. զեկույց

Ընդ որում, այս մոտեցումների մասին է վկայում նաև զորակոչի ընթացքում անձանց զինվորական ծառայությունից ազատման փորձը: Մասնավորապես, մինչև զորացրումը անձի սեռական կողմնորոշման բացահայտումը հանգեցնում է զինվորական ծառայությունից ազատման գործընթացի՝ հոգեկան առողջության խնդրի հիմքով: Այս ընթացքում, հիմնականում մինչև զինծառայության ժամկետի ավարտը, անձը հիմնականում գտնվում է զինվորական հոսպիտալի տարածքում՝ մեկուսացված և խտրական պայմաններում: Իհարկե Հայաստանում նույնասեռականությունը վաղուց արդեն հոգեկան առողջության խնդիրների շարքին չի դասվում, այնուամենայնիվ, կարելի է ենթադրել, որ անձանց որևէ պատրվակով զինծառայությունից ազատումը նպատակ ունի զինվորական հրամանատարությանն ազատել լրացուցիչ «բեռից»:

Այս մոտեցումները խախտում են անձի արժանապատվության, անձնական կյանքի անձեռնմխելիության և հավասար վերաբերմունքի հիմնարար սկզբունքները: Զինվորական համակարգում բացակայում են ՍԿԳԻ հիմքով խտրականությունը կանխարգելող հստակ քաղաքականություններ և մեխանիզմներ: Արդյունքում, խտրական վերաբերմունքը դառնում է ոչ թե բացառություն, այլ լռելյայն հանդուրժվող պրակտիկա:

Բացի այդ, այս դեպքերը կրում են բարձր վտանգավորություն՝ ինչպես անհատական, այնպես էլ համակարգային մակարդակներում: Մասնավորապես,

Անհատական մակարդակում՝ վերոնշյալ օրինակներում՝

- Հոգեկան առողջության կենտրոն տեղափոխումը առանց բժշկական հիմնավորման կարող է հանգեցնել հոգեբանական ծանր հետևանքների, ներառյալ ինքնարժևորման կորստի և այլ տրավմաների:
- Սեռական հարաբերությունների տեսանյութի տարածումը ոչ միայն խախտում է անձնական կյանքի իրավունքը, այլ նաև ստեղծում է շարունակական վտանգ՝ հետապնդման, սպառնալիքների և ֆիզիկական բռնության տեսքով:
- Ծառայությունից հետո անձանց անվտանգության բացակայությունը, ներառյալ՝ վերադարձի անհնարինությունը իրենց համայնք, փաստացի երկարացնում է բռնության ազդեցությունը ծառայությունից դուրս:

Համակարգային մակարդակում՝

- Զինված ուժերում նման պրակտիկաները ձևավորում են վախի և լռության միջավայր, որտեղ խոցելի խմբերի ներկայացուցիչները խուսափում են օգնություն խնդրելուց և պաշտպանության միջոցների դիմելուց:
- Հոգեբուժական հաստատությունների կիրառումը՝ որպես ժամանակավոր լուծում վտանգավոր պրակտիկա է, որը կարող է արդարացնել հարկադրական «բուժումները», ապօրինի միջամտությունները և ազդեցություն ունենալ հասարակության շրջանում սխալ պատկերացումների ձևավորման առումով:
- Անձնական տվյալների պաշտպանությունը չապահովելը մեծացնում է բռնության շղթայական տարածման ռիսկը, ներառյալ՝ զինվորական միջավայրից դուրս:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ) հաստատել է, որ սեռական կողմնորոշման հիմքով անձանց նկատմամբ պետական մարմինների անգործությունը կամ խտրական վերաբերմունքը խախտում է անձի՝ խոշտանգումներից, անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վե-

ռաբերմունքից և պատժից զերծ լինելու իրավունքը՝ խտրականությունից զերծ լինելու իրավունքի հետ համակցությամբ:[22]

Սեռական կողմնորոշումը չի կարող դիտարկվել որպես սոցիալական կամ բժշկական խնդիր, որը պահանջում է «կառավարում» կամ անձի մեկուսացում: Սեռական կյանքի վերաբերյալ տվյալների չպաշտպանված օգտագործումը կարող է հանգեցնել նախ և առաջ մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտման, ինչպես նաև հաճախ առավել ծանր հետևանքների, ինչպիսիք են՝ բռնությունն ու խտրականությունը: Պետությունը պարտավոր է ապահովել անձնական հաղորդակցության և տվյալների արդյունավետ պաշտպանություն, հատկապես խոցելի միջավայրերում:[23]

Զինվորական ծառայության պայմաններում, որտեղ անձը գտնվում է լիակատար վերահսկողության ներքո, պետության դրական պարտավորությունները տվյալների պաշտպանության առումով առավել բարձր են, իսկ անգործության արդյունքում անձին պատճառված վնասը՝ առավել ծանր:

ՄԻԵԿ-ի 3-րդ հոդվածը բացարձակ իրավունք է և արգելում է խոշտանգումները, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքը՝ անկախ հանգամանքներից, ներառյալ՝ ազգային անվտանգությունից կամ զինվորական ծառայության առանձնահատկություններից:

ՄԻԵԴ-ը հաստատել է, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ բռնության և սպառնալիքների պարագայում պետությունը պարտավոր է իրականացնել արդյունավետ քննություն:[24] Սեռական կողմնորոշման հիմքով ատելության դրսևորումները պահանջում են պետության հատուկ զգոնություն և արագ արձագանք:[25] Այս պարագայում, զինվորական ծառայությունից հետո տուժողին գյուղ վերադառնալու դեպքում վնասելու սպառնալիքները վկայում են, որ պետությունը չի կատարել իր դրական պարտավորությունը՝ ապահովելու անձի անվտանգությունը ծառայությունից հետո:

Դատարանը շեշտել է, որ զինված ուժերում «կարգապահության» կամ «մարտունակության» ապահովման նպատակը՝ որպես հիմնավորում, ինքնին չի կարող արդարացնել սեռական կողմնորոշման հիմքով խտրականությունը:[26]

Միջազգային չափորոշիչների և ՄԻԵԴ նախադեպերի լույսի ներքո՝ ներկայացված դեպքերը պետք է դիտարկվեն որպես.

- սեռական կողմնորոշման հիմքով խտրականություն,
- անմարդկային և նվաստացուցիչ վերաբերմունք,
- անձնական կյանքի և տվյալների պաշտպանության խախտում,
- պետության դրական պարտավորությունների չկատարում զինվորական ծառայության ընթացքում և դրանից հետո:

Այս հանգամանքները պահանջում են ոչ միայն առանձին դեպքերի քննություն, այլև համակարգային բարեփոխումներ զինված ուժերում և հարակից իրավակիրառ պետական մարմիններում:

22 ՄԻԵԴ վճիռ թիվ 73235/12, Իդենտոբան և այլոք ընդդեմ Վրաստանի
23 ՄԻԵԴ վճիռ թիվ 61496/08, Բարբուլեսկուն ընդդեմ Ռումինիայի
24 ՄԻԵԴ վճիռ թիվ 12060/12, Մ.Ս.-ն և Ա.Ս.-ն ընդդեմ Ռումինիայի
25 ՄԻԵԴ վճիռ թիվ 41288/15, Բեիզարասը և Լևիկասն ընդդեմ Լիտվայի
26 ՄԻԵԴ վճիռ թիվ 31417/96 և 32377/96, Լուսթիգ Փրին և Բեքեթը ընդդեմ Միացյալ Թագավորության

ՄԱՍՆԱՎՈՐ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐԳԱՆՔԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Անձնական և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի՝ օրենքի առջև իրավասուբյեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը:[27] Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը՝[28] որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում: «Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղավորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում:[29]

ՄԻԵԴ-ն իր մի շարք որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ մասնավոր անհատների ոտնձգություններից անձի ֆիզիկական և հոգեբանական անձեռնմխելիության իրավունքի պաշտպանության կապակցությամբ իշխանություններն ունեն պոզիտիվ պարտականություն՝ ստեղծել և ապահովել իրավական նորմերի պատշաճ շրջանակ, որը թույլ կտա պաշտպանել մասնավոր անձանց կողմից բռնի գործողություններից:[30]

Չնայած նրան, որ միջազգայնորեն հռչակված մարդու իրավունքները երաշխավորված են Սահմանադրությամբ, դրանց արդյունավետ գործողությունը ապահովվում է օրենսդրական ակտերով նախատեսված մեխանիզմներով: ՀՀ-ում անձին դիտավորությամբ ֆիզիկական վնաս պատճառելու դեպքում պատասխանատվության մեխանիզմները նախատեսվում են ՀՀ քրեական օրենսգրքով:[31] Վերջինս պատիժ է սահմանում տարբեր աստիճանի վտանգավորության և տարբեր տեսակի վնասներ պատճառող ֆիզիկական և հոգեկան ներգործության հանցանքների համար, որտեղ կարևոր է տարանջատել մասնավոր կյանքի իրավունքի խախտում հանդիսացում վնասը անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք և ընդհուպ մինչև խոշտանգում համարվող ներգործությունից:

Այս ենթաբաժնում ընդգրկված են՝

- ընտանեկան բռնության դեպքերը,

27 Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՄԱԿ 1966 թ. միջազգային դաշնագիր
28 Հոդվածներ16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16
29 ՄԻԵԴ վճիռ թիվ 2346/02, §49. Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության
30 ՄԻԵԴ վճիռներ՝ Օմանն ընդդեմ Միացյալ Թագավորության, §§ 128-130; Բեվական և Ս.-ն ընդդեմ Բուլղարիայի, § 65; Սանդրա Յանկովիչն ընդդեմ Խորվաթիայի, § 45; Ա.-ն ընդդեմ Խորվաթիայի, § 60; Դորդեվիչն ընդդեմ Խորվաթիայի, §§ 141-143; Սոդերմանն ընդդեմ Շվեդիայի, Մեծ պալատ, § 80.
31 ՀՀ Քրեական օրենսգիրք. Հոդված 194, 195, ինչպես նաև առողջության դե ուղղված հանցագործություններ. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080

- այլոց կողմից ֆիզիկական, սեռական և հոգեբանական բռնության դեպքերը, ներառյալ՝ կյանքին կամ առողջությանն ուղղված սպառնալիքները, ինչպես նաև՝ շորթման և մասնավոր կյանքի վերաբերյալ տեղեկատվության տարածման դեպքերը,
- արտահայտման ազատության չարաշահումը:

Շատ դեպքերում, իհարկե, արարքները կարող են զուգահեռաբար առկա լինել, երբ օրինակ՝ ընտանեկան բռնությունը հաջորդել է անձի ՍԿԳԻ վերաբերյալ տեղեկատվության տարածմանը, ֆիզիկական բռնությունը զուգորդվել է սպառնալիքներով և այլն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Արձանագրված ընտանեկան բռնության դեպքերը վերաբերում են նույնասեռական և տրանս անձանց նկատմամբ զուգընկերային և ընտանիքի ներսում ու կենցաղային միջավայրում դրսևորվող խտրականությանը և շարունակական բռնությանը: Դրանք ընդգրկում են ինչպես չափահաս, այնպես էլ անչափահաս անձանց և արձանագրվել են տարբեր սոցիալական, տարիքային և ընտանեկան համատեքստերում: Այսպես, **արձանագրված 30 ընտանեկան բռնության դեպքերից 20-ը տեղի են ունեցել չափահաս անձանց նկատմամբ, հիմնականում ծնողների կողմից**: Դեպքերից հինգի պարագայում տուժողները անչափահաս անձինք են: Եվս հինգ դեպք վերաբերում է զուգընկերոջ կողմից բռնությանը: Արձանագրվել է նաև մեկ կենցաղային բռնության դեպք՝ անձի մորաքրոջ կողմից: Ընտանեկան բռնության դեպքերի այսպիսի տարանջատումը պայմանավորված է օրենսդրական և պրակտիկ խնդիրներով, որոնք լրացուցիչ խոչընդոտներ են առաջացնում իրավապահ մարմիններին դիմելու և վերջինների կողմից պատշաճ արձագանքման և դեպքերին ընթացք տալու առումով: Այդ մասին առավել մանրամասն կներկայացվի ստորև:

Հարկ է նշել, որ այս քանակական տվյալները չեն ընդգրկում այն դեպքերը, երբ ծնողները կիրառել են մանիպուլատիվ մեթոդներ անձի որոշումների նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով, ինչպես օրինակ՝ ասելով, թե անձի մայրը կմահանա, եթե ինքը շարունակի իր ապրելակերպը (նկատի ունենալով նույնասեռական վարքագիծը), կամ անձի ընտանիքի անդամները լուրջ հոգեբանական խնդիրներ ունենան դրա արդյունքում:

Ներկայացնում ենք արձանագրված դեպքերի մի քանի օրինակներ՝ առավել հստակ պատկերացում կազմելու համար դեպքերի բնույթի մասին:

> Մեկ դեպքում նույնասեռական անձի ընտանիքի անդամները նրա սեռական կողմնորոշման մասին տեղեկանալուց հետո սկսել են խիստ վերահսկել նրա արտաքին տեսքը, հագուստը և սոցիալական շփումները: Անձը ենթարկվել է պարբերական հոգեբանական ճնշման, վիրավորանքների և սպառնալիքների: Ընտանիքի կողմից սահմանափակվել է նրա ազատ տեղաշարժը, իսկ որոշ ժամանակ անց նա վտարվել է տնից՝ չունենալով այլ ապահով կացարան: Անձը չի դիմել իրավապահ մարմիններին՝ վախենալով կրկնազոհացումից և

ընտանիքի կողմից հետագա բռնությունից:

Մեկ այլ դեպքում նույնասեռական կնոջ ընտանիքի անդամները առանց նրա համաձայնության առգրավել են նրա բջջային հեռախոսը, կարդացել անձնական նամակագրությունները և տարածել նրա ու զուգընկերուհու լուսանկարները ընտանիքի ներսում: Դրան հաջորդել է ֆիզիկական բռնություն, հայհոյանքներ և երկարատև ազատ տեղաշարժի սահմանափակում: Վերջում կինը վտարվել է տնից՝ ամբողջությամբ զրկվելով ընտանեկան աջակցությունից:

Փաստագրվել է դեպք, երբ նույնասեռական անձի եղբայրը փորձել է խեղդել նրան՝ ուղեկցելով գործողությունը կյանքին ուղղված սպառնալիքներով: Բռնության դրդապատճառը եղել է անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկացվածությունը: Տուժողը չի դիմել ոստիկանություն՝ վախենալով իրավիճակի սրացումից և իրավապահ մարմինների ոչ արդյունավետ արձագանքից:

Անչափահաս նույնասեռական անձը տարիներ շարունակ ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական բռնության ծնողների կողմից: Ոստիկանությանը դիմելուց հետո իրավապահները բռնությունը դիտարկել են որպես դաստիարակության խնդիր և չեն իրականացրել արդյունավետ պաշտպանական միջոցներ: Անչափահասը տեղափոխվել է խնամքի կենտրոն, որտեղ նույնպես բախվել է խտրական վերաբերմունքի և տեղաշարժի սահմանափակման, ինչի հետևանքով ստիպված է եղել վերադառնալ բռնության նույն միջավայր:

Տրանս կինը կենցաղային միջավայրում ենթարկվել է խտրական վերաբերմունքի՝ իր գենդերային ինքնության պատճառով՝ ներառյալ՝ կենցաղային իրերի առանձնացում, մեկուսացում և արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ: Ոստիկանությանը դիմելու դեպքում իրավապահ մարմինները չեն արձագանքել խտրականության փաստին և սահմանափակվել են ձևական բացատրություններով՝ չապահովելով նրա իրավունքների պաշտպանությունը:

Այսպիսով, դեպքերի մեծ մասում բռնության և խտրական վերաբերմունքի պատճառ է հանդիսացել անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության բացահայտումը կամ դրա վերաբերյալ ենթադրությունները: Այդ բացահայտումից հետո ընտանիքի անդամների կողմից դրսևորվել են վերահսկողության, ճնշման և պատժման տարբեր մեխանիզմներ՝ ուղղված անձի վարքագծի, արտաքինի, սոցիալական շփումների և ինքնարտահայտման սահմանափակմանը:

Արձանագրվել են ընտանեկան բռնության բազմատեսակ դրսևորումներ՝ հոգեբանական, ֆիզիկական և տնտեսական: Հաճախակի են եղել վիրավորանքները, նվաստացնող արտահայտությունները, սպառնալիքները, մեղադրանքները և «ամոթի» վրա հիմնված ճնշումները: Մի շարք դեպքերում բռնությունը ունեցել է ֆիզիկական բնույթ՝ ներառելով ծեծ, այլ տեսակի ֆիզիկական ներգործություն,

մարմնական վնասվածքներ հասցնելը՝ զուգորդված կյանքի ու առողջության դեմ ուղղված սպառնալիքներով:

Արձանագրվել են նաև դեպքեր, երբ ընտանիքի անդամները առանց անձի համաձայնության կարդացել են անձնական հաղորդագրություններ, առգրավել են բջջային հեռախոսներ, տարածել են լուսանկարներ և նամակագրություններ, ինչպես նաև անձի սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկատվությունը փոխանցել են երրորդ անձանց:

Շատ դեպքերում ընտանիքի անդամների կողմից փորձ է արվել «ուղղել» կամ «փոխել» անձի սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը՝ տարբեր ճնշումների, հոգեբանական միջամտությունների, գուշակի կամ այլ ոչ մասնագիտական մեթոդների միջոցով: Այս միջամտությունները ուղեկցվել են անձի արժանապատվության նվաստացմամբ և հոգեկան առողջությանը վնասող գործելակերպերով: Այսպիսի մեթոդների կիրառումը, ինչպես նախկինում իրականացված հետազոտության արդյունքներն են ցույց տվել, կարող է հանգեցնել անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի:[32]

Արձանագրված են նաև տնից վտարելու, ժամանակավոր կամ մշտապես անձին անօթևան թողնելու դեպքեր, ինչպես նաև ազատ տեղաշարժի սահմանափակումներ: Մի շարք անձինք ստիպված են եղել լքել իրենց բնակության վայրը՝ անվտանգության նկատառումներից ելնելով՝ չունենալով այլ ապահով կացարան կամ պետական աջակցություն:

Գրեթե բոլոր դեպքերում տուժողները չեն դիմել իրավապահ մարմիններին՝ վախենալով կրկնազոհացումից, խտրական վերաբերմունքից կամ անձնական կյանքի վերաբերյալ տեղեկատվության բացահայտումից: Միայն մեկ դեպքում, երբ դիմում է ներկայացվել, արձանագրվել է իրավապահ մարմինների ոչ արդյունավետ արձագանք, տուժողի նկատմամբ վատ վերաբերմունքում խտրականության բաղադրիչի անտեսում: Այս վերաբերմունքին են բախվել նաև այն անձինք, ովքեր նախկինում են դիմել իրավապահ մարմիններին կամ իրենց ծանոթ այլ անձինք են դիմել, ինչը հիմք է հանդիսանում կրկին դիմելուց հրաժարվելու համար:

Ընդհանուր առմամբ, ներկայացված դեպքերը վկայում են, որ նույնասեռական և տրանս անձանց համար ընտանիքը և կենցաղային միջավայրը հաճախ դառնում են խտրականության և բռնության տարածք, իսկ պաշտպանության և աջակցության պետական մեխանիզմները՝ անբավարար կամ անհասանելի:

Չնայած նրան, որ տարվա ընթացքում արձանագրված դեպքերի ճնշող մեծամասնությունը լինում են ընտանեկան բռնության դեպքեր, դրանից շատ քչերն են բողոքարկվում իրավապահ մարմիններին, իսկ բողոքարկման պարագայում անգամ, քչերն են արդյունավետ քննության առարկա դառնում:

Այսպիսով, համադրելով այս տարվա ընթացքում արձանագրված դեպքերը նախորդ տարիների իրավիճակի հետ, դուրս են բերվել հետևյալ համակարգային բնույթի խնդիրներ, որոնք կարիք ունեն հրատապ հասցեավորման՝

- Տուժողների նկատմամբ ոչ զգայուն վերաբերմունք, կրկնազոհացում, ծաղր,
- Անչափահաս տուժողներին աջակցության օրինական սահմանափակումներ,

32 «Փինք» իրավապաշտպան ՀԿ, «Կոնվերսիոն պրակտիկաների և թերապիաների իրականացման մասին ուսումնասիրություն Հայաստանում», 2020 թ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2024/02/conversion-therapy.pdf

- Ապաստարանների փաստացի անհասանելիություն ԼԳԲՏ+ անձանց դեպքում,
- Կարիքի գնահատման և մասնագիտական աջակցության ուղղորդման պրակտիկայի բացակայություն:

Տուժողների նկատմամբ ոչ զգայուն վերաբերմունք, կրկնազոհացում, ծաղր

Ընտանեկան բռնությունից տուժած անձանց կողմից դեպքերի՝ իրավապահ մարմինների հայտնելու քանակի ցածր մակարդակը նախ և առաջ կապված է ոստիկանության և քննչական մարմինների նկատմամբ վստահության բացակայության հետ: Ցանկացած դեպքում բողոքի ներկայացումից հետո առաջինը արձագանքելու պարտավորություն ունեցող ոստիկանները, իսկ հաջորդ փուլում՝ քննիչները, իրենց վերաբերմունքով և տուժողի նկատմամբ մոտեցմամբ կանխորոշում են դեպքի քննության արդյունավետությունը, ներառյալ՝ տուժողի համագործակցայնությունն ու հետագա վստահությունը: Տուժողները ահազանգում են, որ առանց իրավապաշտպանների կամ փաստաբանների մասնակցության իրավապահ մարմիններին դիմելու պարագայում որպես կանոն հանդիպում են ծաղրի, վիրավորանքի ու վատ վերաբերմունքի: Ընտանեկան բռնության դեպքերին հատուկ է նաև տուժողի նկատմամբ մեղադրական վերաբերմունքը՝ ընտանիքի անդամների դեմ բողոք ներկայացնելու համար, ինչը էլ ավելի ծանր հոգեբանական դրության մեջ է դնում տուժողին: Հարկ է նշել նաև, որ չնայած նրան, որ վերացվել է զուգընկերոջ կողմից բռնության պարագայում դեպքի որպես այդպիսին քննության օրենսդրական բացը, այնուամենայնիվ, նույնասեռական հարաբերություններում գտնվող անձինք խուսափում են բռնության պարագայում դիմել իրավապահ մարմիններին՝ խուսափելով նախ և առաջ վատ վերաբերմունքից և ծաղրից, այնուհետև՝ անձնական կյանքին վերաբերող տվյալների տարածումից:

Այսպիսով, իրավապահ մարմինների նկատմամբ վստահության բացակայության մեկ այլ պատճառ է անձնական տեղեկատվության տարածումը, ինչը ոստիկանության կամ քննիչների կողմից ոչ պրոֆեսիոնալ և ոչ զգայուն մոտեցման արդյունք է:

Անչափահաս տուժողներին աջակցության օրինական սահմանափակումներ

Իրավական պաշտպանության մեխանիզմների կիրառման տեսանկյունից հատկապես խոցելի են անչափահաս անձինք, ում օրինական ներկայացուցիչը հանդիսանում է հենց բռնարարը: Ոստիկանության կողմից ոչ զգայուն վերաբերմունքի և ոչ պրոֆեսիոնալ մոտեցման արդյունքում հաճախ չի ներգրավվում մանկավարժ՝ որպես տուժող անձի ներկայացուցիչ, այլ փորձ է արվում հաշտեցնել ընտանիքին և անչափահասին վերադարձնել բռնության նույն միջավայր: Հասարակական կազմակերպությունների (ՀԿ) կողմից անչափահաս անձանց պաշտպանության ու շահերի ներկայացման հնարավորությունը սահմանափակ է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ փաստաբանը կարող

է ներգրավվել միայն անչափահաս տուժողի օրինական ներկայացուցչի լիազորմամբ: Այսպիսով, կարևոր է ոստիկանության կողմից հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը՝ ընտանեկան բռնությունից տուժած անչափահաս անձանց պաշտպանությունը պատշաճ իրականացնելու և տուժողների համար ապահով միջավայր ստեղծելու առումով: Միևնույն ժամանակ, անչափահաս անձանց պարագայում, ում համար վտանգավոր է վերադարձը ընտանիք, անհրաժեշտ է իրականացնել իրավիճակի համապարփակ գնահատում՝ ներառյալ պետության կողմից տրամադրվող աջակցության առումով: Այսպիսով, որոշ դեպքերում, ընտանեկան բռնության ենթարկված ԼԳԲՏ+ անձինք ևս տեղափոխվում են դժվարին իրավիճակում հայտնված երեխաների խնամքի կենտրոններ: «Փինք» ՀԿ-ի կողմից արձանագրվել են խտրականության ու վատ վերաբերմունքի դեպքեր հենց այս հաստատություններում ևս, ինչը նույնպես պետք է նախարարության ուշադրության առարկան լինի՝ թե առանձին դեպքերում արագ և պատշաճ արձագանքի առումով, թե պատասխանատու պետական մարմնի հետ համագործակցությամբ առկա խնդիրները քաղաքականությունների մակարդակում հասցեավորելու առումով:

Ապաստարանների սահմանափակումները կամ փաստացի անհասանելիությունը

Ընտանեկան բռնության տուժողները հաճախ նաև չունեն հնարավորություն ինքնուրույն ապահովելու իրենց կյանքի համար նվազագույն պայմաններ, ներառյալ՝ կացարան, ինչը իրենց դնում է բռնարարից կախման մեջ: ՀԿ-ների կողմից տրամադրվող ապաստարանները անհամեմատելի նվազ ռեսուրս են առկա կարիքի համեմատ: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ այդ ապաստարանները կախված են ժամանակավոր ծրագրերից, հետևաբար նաև չեն կարող համարվել երկարաժամկետ լուծում: Այս առումով ևս ԼԳԲՏ+ անձինք ավելի խոցելի են, քանի որ քիչ են թե այս խմբի շահերի պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները, թե ռեսուրսները: Այսպիսով, պետությունը պետք է դիտարկի նաև հնարավորությունները ապահովելու համար ընտանեկան բռնության ենթարկված անձանց ապահով կացարանի հասանելիությունը՝ կանխելու համար հետագա բռնությունը: Այս առումով հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությունը կարևոր է թե ապաստարաններում տուժողների նկատմամբ հետագա խտրական վերաբերմունքի բացառման, թե հնարավորության սահմաններում աջակցության առումով:

Կարիքի գնահատման և մասնագիտական աջակցության ուղղորդման պրակտիկայի բացակայություն

Որպես առաջինն արձագանքող մարմին, ոստիկանությունը պետք է պատրաստված լինի նաև տուժողի կարիքների գնահատման և անհրաժեշտության պարագայում մասնագետների ուղղորդման ուղղությամբ: Հաշվի առնելով ընտանեկան բռնության բնույթն ու տուժողի վրա հոգեբանական և սոցիալական հետևանքները, հատկապես կարևոր է հոգեբանի և սոցիալական

աշխատողի ծառայությունների տրամադրումը հենց սկզբնական փուլում: Այս հարցում ևս ոստիկանության և հասարակական կազմակերպությունների միջև համագործակցությունը կարող է մեծապես թեթևացնել պետության ֆինանսական բեռը, բացի այդ, ապահովել տուժողների համար զգայուն և փորձառու մասնագիտական աջակցություն: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների ռեսուրսների սահմանափակ լինելը, պետության կողմից մասնագետների ներգրավման պարագայում, առաջարկում ենք վերապատրաստումներ՝ ԼԳԲՏ+ անձանց հետ աշխատանքի առանձնահատկությունների և զգայուն վերաբերմունքի ուղղությամբ:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Արձանագրվել է ֆիզիկական բռնության 7 դեպք, որոնցից տուժել են և տրանս և նույնասեռական անձինք, ներառյալ՝ անչափահասներ: Հատկանշական է, որ գրեթե բոլոր դեպքերում հանցավորները տուժողներին անծանոթ մարդիկ են եղել, չեն ունեցել որևէ այլ անձնական դրդապատճառներ:

Դեպքերի ուսումնասիրությունը փաստում է, որ ինչպես տրանս անձանց, այնպես էլ նույնասեռական անձանց նկատմամբ կիրառված բռնության դեպքերը կրում են հետևողական և համակարգային բնույթ, իսկ այդ գործողությունների հիմնական դրդապատճառը անձի ՍԿԳՀ-ն է: Դեպքերում առկա են ինչպես ֆիզիկական բռնություն, սպառնալիքներ և ստորացնող վերաբերմունք, այնպես էլ՝ ԼԳԲՏ+ համայնքի բացահայտ թիրախավորում, որը ուղեկցվում է վիրավորական արտահայտություններով և արժանապատվությունը նսեմացնող հրապարակային վարքագծով: Սա փաստում է, որ ԼԳԲՏ+ անձինք Հայաստանում շարունակում են համարվել բարձր ռիսկային խումբ՝ կապված թե՛ հասարակական վերաբերմունքի, և թե՛ իրավապահ համակարգի կողմից արդյունավետ պաշտպանության բացակայության հետ:

Սակայն գրեթե բոլոր դեպքերում իրավապահ մարմինների արձագանքը չի համապատասխանում պետության ստանձնած պարտավորություններին: Ոստիկանությունը չի արձանագրել, չի ուսումնասիրել կամ ուղղակի անտեսել է ատելության շարժառիթի հնարավորությունը: Բացի այդ, առանձին դեպքերում ոստիկանության աշխատակիցների կողմից ինքնիրավչության հանդուրժումը, վիրավորական արտահայտությունների անտեսումը կամ զոհի նկատմամբ խտրական վերաբերմունքը ոչ միայն հակասում է մասնագիտական վարքագծի ստանդարտներին, այլ նաև կարող է դիտարկվել որպես պետության կողմից անմարդկային վերաբերմունքի հանդուրժում: Սա մեծապես խարխլում է ԼԳԲՏ+ անձանց՝ պետությանը և իրավական պաշտպանությանը վստահելու պատրաստակամությունը՝ ստիպելով նրանց հրաժարվել բողոքներից կամ չդիմել իրավապահներին անգամ ծանր հարձակումների դեպքում:

Բռնության դեպքեր են տեղի ունեցել նաև անչափահաս անձանց նկատմամբ:

Օրինակ՝

Անչափահաս նույնասեռական անձի նկատմամբ բռնություն են գործադրել նույն բակում բնակվող երեխաները: Վիճաբանության ընթացքում բակի տղաները ասել են. «Քանի անգամ ենք ասել, որ քո նմանները բակ դուրս չգան և այս թաղամասում չպետք է լինեն»: Այնուհետև նրանք ձեռքերով և ոտքերով հարվածներ են հասցրել նրա մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, մասնավորապես՝ կոտրել են նրա քիթը: Տուժողը ոստիկանություն բողոք է ներկայացրել, սակայն որոշ ժամանակ անց նրա մայրը բողոքը հետ է վերցրել՝ այն պատճառաբանությամբ, թե հաշտվել են բռնարարների հետ:

Անչափահասի նկատմամբ բռնության դեպքը բացահայտում է պետության մեկ այլ լուրջ բաց՝ երեխաների պաշտպանության անբավարարությունը, երբ նույնիսկ հանցագործության մասին հաղորդումը հետ է վերցվել ծնողի կողմից, իսկ ոստիկանությունը չի շարունակել վարույթը սեփական նախաձեռնությամբ, ինչն օրենքով պարտադիր է անչափահասի նկատմամբ բռնության դեպքերում: Սա վտանգավոր նախադեպ է, քանի որ թույլ է տալիս, որ բռնարարները մնան անպատիժ, իսկ խտրական վերաբերմունքը խճճվի համայնքային վարքագծի մեջ՝ դառնալով «նորմալացված»:

Տրանս կինը հաղորդում է ներկայացրել ոստիկանություն՝ հայտնելով, որ անծանոթ տղամարդը սեռական հարաբերություն ունենալու նպատակով հանդիպել է իր հետ, որից հետո տաքսիով շարունակել են ճանապարհը: Տղամարդը մեքենայի մեջ զանգահարել է իր ծանոթին և նշել, թե մեկին բերում է, որի հետ կապված կինը վտանգ է զգացել, հայտնել է , որ մեքենան կանգնեցնի, քանի որ նա ցանկանում է դուրս գալ և չի ցանկանում իր հետ սեռական հարաբերություն ունենալ: Երբ նա իջել է մեքենայից, անծանոթը ևս իջել է և ձեռքերով ու ոտքերով հարվածներ է հասցրել կնոջ մարմնի տարբեր հատվածներին, այնուհետև վերցրել է կնոջ բջջային հեռախոսը և փորձել է փախչել, սակայն կինը կարողացել է հետ վերցնել իր բջջային հեռախոսը, որից հետո այդ տղամարդը սկսել է ծեծել կնոջը: Երբ փողոցում գտնվող քաղաքացիները փորձել են օգնել տրանս կնոջը, բռնարարը նշել է, թե. «Գոմիկ ա, դրա համար եմ ծեծում»: Նույնիսկ Կենտրոնի ոստիկանություն բերման ենթարկվելուց հետո, բռնություն գործադրող անձը ոստիկանների և քննիչի ներկայությամբ շարունակել է տրանս կնոջ հասցեին վիրավորանքներ հնչեցնել՝ կրկնելով, որ վերջինս «գոմիկ» է, դրա համար է ծեծի ենթարկել, իկնոջ հասցեին սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել՝ գենդերային ինքնության մատնանշումով: Տրանս կինը ֆիզիկական բռնության արդյունքում ստացել է մի շարք մարմնական վնասվածքներ: Գործը գտնվում է դատարանում, սակայն տելության շարժառիթը չի դիտարկվել որպես ծանրացնող հանգամանք:

Տրանս կինը իր բնակարանում սեռական ծառայություն մատուցելու նպատակով հանդիպել է 21 տարեկան երիտասարդ տղամարդու հետ: Կեսգիշերին

դիմողը ուղեկցել է երիտասարդին տան դռան մոտ: Հասնելով մուտքի մոտ՝ նա շրջվել է տրանս կնոջ ուղղությամբ և բռունցքով մի քանի հարված հասցրել նրա մարմնի տարբեր մասերին: Այնուհետև նա սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել տրանս կնոջ հասցեին՝ մասնավորապես նշելով՝ «ձեր նմանները պետք է վերանան այս երկրից» և բնակարանից փախուստի է դիմել: Տրանս կինը դեպքի վերաբերյալ հաղորդում է ներկայացրել ոստիկանություն, նախաձեռնվել է քրեական վարույթ ֆիզիկական ներգործության հոդվածով, ինչից հետո գործի ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն չի ստացվել:

Անձը զբաղվել է սեքս աշխատանքով և երբ հանդիպել է հերթական այցելուին, վերջինս նրանից խլել է հեռախոսը, և երբ նա փորձել է վերադարձնել այն, հարվածել է նրան: Արդյունքում կոտրել է անձի ատամները և քիթը: Նա դիմել է ոստիկանություն: Ոստիկանական բաժանմունքում բռնարարը շարունակել է գոռալ ու հայհոյել անձին սակայն ոստիկանները պարզապես ասել են, որ նա լռի:

Ներկայացված դեպքերը ցույց են տալիս նաև, որ սեռական ծառայություն մատուցող տրանս կանայք և նույնասեռական տղամարդիկ առավել խոցելի են բռնության նկատմամբ, իսկ ոստիկանության վերաբերմունքը երբեմն ավելի է սրում այդ խոցելիությունը: Ոստիկանության անգործությունն ու արհամարհանքը նպաստում են անպատժելիության մթնոլորտին, որն իր հերթին խրախուսում է նոր բռնություններ՝ համայնքը դարձնելով մշտապես վտանգված:

Միաժամանակ, դեպքերի մի մասում հստակ երևում է վրեժխնդրության, հետապնդման, սպառնալիքների և ինքնության բացահայտման վտանգը, որը խորը վնաս է հասցնում անձնական կյանքի գաղտնիությանը և կարող է հանգեցնել ինչպես հոգեբանական ծանր հետևանքների, այնպես էլ՝ աշխատանքից զրկվելու, ընտանեկան բռնության և սոցիալական մեկուսացման:

Արձանագրված դեպքերից մեկում նույնասեռական զույգը կանգնած է եղել դրսում, երբ մի տղամարդ մոտեցել է և ռուսերեն բարձրաձայն ասել. «հեռացեք այստեղից», ապա՝ ձեռքով բռնել է, քաշքշել ու նորից պահանջել, որ հեռանան տարածքից: Ընթացքում տղամարդը վիրավորական արտահայտություններով հարցրել է, թե արդյոք նրանք տղա են, թե աղջիկ: Ձայներից այլ մարդիկ են հավաքվել, զույգը նստել է մեքենան, որպեսզի փախչի այդտեղից: Այդ պահին տղամարդը հետևներից գոռացել է, թե գնալու են նրանց ետևից: Դրանից մոտ 10 օր անց անծանոթ անձինք դրսում կրկին հետապնդել են նրանց, սակայն նրանք կարողացել են փախչել: Տուժողները չեն ցանկացել դիմել իրավապահներին:

Նույնասեռ զույգի նկատմամբ հետապնդումը և կրկնվող հարձակումները ևս վկայում են, որ հոմոֆոբ շարժառիթով իրականացվող բռնությունները հաճախ ունեն համակարգված բնույթ և կարող են երկարաժամկետ սպառնալիք ստեղծել զոհերի համար:

Ընդհանուր առմամբ, այս դեպքերն ի ցույց են դնում պետության՝ բռնությունից

պաշտպանելու և խտրականությունը կանխելու պարտավորությունների համակարգային անկատարությունը: Արդյունքում ձևավորվում է անպատժելիության և օրենքի ընտրովի կիրառման մթնոլորտ, որն առավել վտանգավոր է հենց այն խմբերի համար, որոնք հասարակության մեջ արդեն իսկ առավել խոցելի են: ԼԳԲՏ+ համայնքի նկատմամբ բռնության դեպքերի այս շղթան ոչ միայն սպառնում է առանձին անձանց իրավունքներին, այլ նաև ազդում է համայնքի ընդհանուր անվտանգային վիճակի վրա՝ խորացնելով վախի և մեկուսացման մթնոլորտը, ինչը կարող է երկարաժամկետ վնաս հասցնել հասարակական համերաշխությանը և մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ համակարգին:

ՍԵՌԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Արձանագրվել է սեռական ոտնձգության 2 դեպք, որոնք երկուսն էլ տեղի են ունեցել հոսթելում, երկուսն էլ Հայաստանում իրենց սեռական կողմնորոշման պատճառով հետապնդումների ենթարկվելու հիմքով ապաստան հայցած օտարերկրացիների նկատմամբ: Երկու պարագայում էլ հանցավորը տուժողի կամքին հակառակ տևական ժամանակ փորձել է սեռական հարաբերություն ունենալ նրա հետ: Դեպքերից մեկի պարագայում տուժողը ունի հաշմանդամություն, ինչը կրկնակի խոցելի է դարձնում նրան: Վերջինիս ծաղրել են թե հաշմանդամություն ունենալու, թե գենդերային արտահայտման պատճառով: Տուժողներից միայն մեկն է դիմել ոստիկանություն, սակայն թարգմանություն այնտեղ չի ապահովվել, հետևաբար ոչինչ չի հասկացել, միայն հերթական անգամ ենթարկվել է ծաղրական, ագրեսիվ, ճնշող վերաբերմունքի, այս անգամ՝ ոստիկանների կողմից, ովքեր բողոքին ընթացք չեն տվել:

Այսպիսով, օտարերկրացիները, ովքեր Հայաստանը դիտել են որպես ապահով երկիր և փախուստի են դիմել իրենց սեռական կողմնորոշման պատճառով հետապնդումների ու բռնության չենթարկվելու նպատակով, բախվում են հերթական բռնությանը, այս անգամ արդեն առավել խոցելի կարգավիճակում, հաշվի անելով լեզվական խնդիրը և անծանոթ միջավայրը: Եվս այս իրավիճակում, մի կողմից պետությունը չի տրամադրում ապաստարան կամ որևէ այլ տեսակի աջակցություն, մյուս կողմից ձախողում է նաև պաշտպանություն տրամադրել անձանց, ովքեր բռնության ու վատ վերաբերմունքի են բախվել երկրի տարածքում:

ՇՈՐԹՈՒՄ

Ի տարբերություն նախորդ տարիների, երբ շորթման դեպքերը բավականին մեծ տեղ էին զբաղեցնում, այս տարի արձանագրվել է մեկ դեպք: Արձանագրված դեպքում անծանոթ անձը նկարահանել է նույնասեռական զույգին քաղաքի մեկուսի վայրերից մեկում իրար ձեռք բռնած քայլելիս, այնուհետև սպառնացել է տարածել տեսանյութը՝ եթե նրանք պարբերաբար իրեն գումար չվճարեն: Նա նաև վերցրել է տուժողի շղթան և չի վերադարձրել: Տուժողը չի ցանկացել դիմել իրավապահ մարմիններին՝ վախենալով, որ սեռական կողմնորոշման մասին

կհայտնեն ծնողներին, ինչը կհանգեցնի բռնության և այլ խոչընդոտների իր բնականոն կյանքում: Հենց այն հանգամանքը, որ բռնությունից տուժած անձինք վախենում են դիմել իրավապահ մարմիններին, դնում է իրենց առավել խոցելի դրության մեջ, ինչն էլ թույլ է տալիս հանցավորներին՝ լինել առավել ինքնավստահ և անպատժելի:

ՄԱՍՆԱՎՈՐ ԿՅԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄ

Հաշվի առնելով ԼԳԲՏ+ անձանց խոցելիությունն ու անպաշտպանությունը, արձանագրվում են նաև դեպքեր, երբ նրանց մասնավոր կյանքի իրավունքը խախտվում է պարզապես հույս ունենալով, որ որևէ պատասխանատվություն դրան չի հետևի:

Այսպիսով, արձանագրված մի դեպքում նույնասեռական անձը պարզել է, որ իր հետ սեռական հարաբերություն ունեցած անձը այդ հարաբերության տեսանյութը գումարի դիմաց վաճառում է: Հանցագործության մասին հաղորդում է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազություն: Հարուցվել է քրեական վարույթ, ինչից հետո իրավախախտը հեռացրել է տեսանյութը և վերադարձրել գումարը, իսկ տուժողը հրաժարվել է բողոքից: Հատկանշական է այն, որ այս պարագայում գործը քննող մարմնի կողմից վարույթը չի կարճվել և գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Այսինքն, երբ իրավախախտը նույնպես ենթադրաբար նույնասեռական անձ է, իրավակիրառ մարմինը շահագրգռված չի եղել բողոքից հրաժարման հիմքով դադարեցնել քրեական հետապնդումը, ինչը թե այս տարի, թե նախկինում արվել է մյուս դեպքերում:

ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ ԵՎ ԱՅԼ ՏԵՍԱԿԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Արձանագրված սպառնալիքների և հոգեկան ներգործության դեպքերը վկայում են ՍԿԳԻ հիմքով խտրականության բազմազան և փոխկապակցված դրսևորումների մասին: Դեպքերը ցույց են տալիս, որ խտրականությունը Հայաստանում ունի ոչ միայն միջանձնային, այլև համակարգային բնույթ՝ խորապես պայմանավորված հասարակական նախապաշարմունքներով, իրավական պաշտպանության բացերով և իրավապահ մարմինների նկատմամբ վստահության պակասով:

Արձանագրված դեպքերից մեկում անձի զուգընկերոջ հայրը հնչեցրել է սպառնալիքներ՝ անձի սեռական կողմնորոշման կամ հարաբերությունների վերաբերյալ տեղեկատվության հարկադրաբար բացահայտման (outing) մասին, ինչպես նաև ոստիկանություն դիմելու միջոցով կեղծ մեղադրանք ներկայացնելու մասին, ինչը ուղղված է անձին վախեցնելուն և ազատ կամքը ճնշելուն:

Այս դեպքում առկա է անձի մոտ վախի ձևավորման մի քանի շերտ, որոնք են՝

- սեռական կողմնորոշման պատճառով հոգեբանական ծանր դրության մեջ դնելը և անձի մասնավոր կյանքին վերաբերող որոշումների կայացումից հրաժարվելը,
- անձնական կյանքի անձեռնմխելիության խախտման սպառնալիք, մասնավորապես, սեռական կողմնորոշման մասին տեղեկության տարածում, ինչը կարող է այլ ծանր հետևանքներ ունենալ անձի համար, ինչպիսիք են՝ ընտանիքի կողմից բռնությունն ու ընտանիքից բացառումը, հասարակական այլ հարաբերություններում խտրականությունն ու բռնությունը,
- իրավապահ մարմինների օգտագործման սպառնալիք՝ որպես ճնշման գործիք. այստեղ առանձնահատուկ վտանգավոր է այն հանգամանքը, որ իրավական մեխանիզմները ներկայացվում են ոչ թե որպես պաշտպանության միջոց, այլ՝ որպես խտրական ճնշման լծակ:

Երկրորդ դեպքը կրթական հաստատությունում հոգեբանական բռնության և ճնշումների մասին է, ինչը ցույց է տալիս կրթական հաստատությունում սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դրսևորումների բնույթը: Դիմողի արտաքին տեսքի պատճառով նրա սեռական կողմնորոշման բացահայտումը հանգեցրել է սպառնալիքների, հետապնդման և փաստացի բռնության վտանգի: Սպառնալիքներն ունեցել են շարունակական բնույթ և ուղեկցվել են նաև երրորդ անձանց ներգրավմամբ, ինչը վկայում է խմբային թիրախավորման մասին:

Դեպքը վկայում է հետևյալ խնդիրների մասին՝

- կրթական միջավայրում խտրականության կանխարգելման մեխանիզմների բացակայություն,
- սեռական կողմնորոշման հիմքով վիրավորանքների, հոգեբանական ճնշումների և սպառնալիքների նորմալացում,
- ոստիկանության նկատմամբ անվստահություն, որը խոչընդոտում է արդյունավետ իրավական պաշտպանության իրացմանը:

Դիմողի հոգեբանական վիճակի վատթարացումը ցույց է տալիս, որ խտրականությունը չի սահմանափակվում մեկ դրվագով, այլ ունի երկարաժամկետ վնասակար հետևանքներ:

Երրորդ դեպքում սպառնալիքներ են հնչեցվել անչափահաս նույնասեռական անձի նկատմամբ, որոնք ուղղված են եղել ոչ միայն նրա արժանապատվության, այլև կյանքի և առողջության դեմ: Հատկապես մտահոգիչ է պաշտոնական կապերի շահարկման մասին սպառնալիքը առ այն, որ եղբայրը աշխատում է դատախազությունում և կարող են նրա միջոցով տուժողի համար խնդիրներ ստեղծել: Նա նպատակ ունի ուժեղացնել վախի մթնոլորտը և կանխել իրավապահ մարմիններին դիմելը:

Այս դեպքը վկայում է՝

- անչափահաս ԼԳԲՏ+ անձանց հատուկ խոցելիության մասին, քանի որ անչափահաս անձի համար օբյեկտիվորեն ավելի անհասանելի են իրավական պաշտպանության մեխանիզմները, իսկ պաշտոնատար անձի ներգրավմամբ սպառնալիքը առավել իրական է և կարող է անձին դնել ավելի ծանր հոգեբանական կացության ու վախի մեջ,
- անձնական տվյալների ապօրինի օգտագործման և գաղտնիության խախտ-

ման վտանգների մասին. այսինքն, ինչպես սպառնալիքի կամ շորթման մյուս դեպքերում, անձի սեռական կողմնորոշման մասին տեղեկության բացահայտումը դիտվում է որպես մեծ ռիսկեր և բռնության վտանգ պարունակող արարք,

Չորրորդ դեպքը ներկայացնում է տրանս կնոջ նկատմամբ ուղղված արժանապատվությունը նվաստացնող, վիրավորական խոսք և կյանքին ուղղված սպառնալիքներ: Ի տարբերություն մի շարք այլ դեպքերի՝ դիմողը դիմել է ոստիկանություն, սակայն որևէ տեղեկատվություն չի ստացել վարույթի ընթացքի վերաբերյալ, ինչը կարող է վկայել կամ անգործության, կամ թափանցիկության բացակայության մասին:

Այս դեպքը բացահայտում է երկու առանցքային խնդիրների մասին՝

- տրանս անձանց նկատմամբ ուղղված ատելության առանձնահատուկ խորությունը, որը կարող է դրսևորվել հասարակական ցանկացած վայրում՝ որևէ անծանոթ անձի կողմից՝ հաշվի առնելով տրանս անձանց գենդերային ավելի տեսանելի արտահայտումը,
- իրավապահ մարմինների կողմից արդյունավետ քննության և հաղորդակցման բացակայությունը, ինչը խորացնում է անվստահությունը համակարգի նկատմամբ:

Հինգերորդ դեպքը վերաբերում է նույնասեռական անձի նկատմամբ իրականացված սեռական բնույթի սպառնալիքներին առ այն, որ սեռական հարաբերությունները պատկերող տեսանյութը կարող է տարածվել: Սեռական հարաբերությունների ընթացքում նկարահանված նյութերի տարածման սպառնալիքը հանդիսանում է ծանր հոգեբանական ճնշման ձև և կարող է դիտարկվել որպես սեռական բռնության բաղադրիչ:

Դիմողի կողմից ոստիկանություն չդիմելը պայմանավորված է նախկինում խտրական վերաբերմունքի ենթարկվելու փորձառությամբ, ինչը վկայում է համակարգային խնդրի մասին՝

- խտրական վերաբերմունքը իրավապահ համակարգում կրկնակի զոհայնացնում է տուժողներին,
- խոչընդոտում է իրավական պաշտպանության արդյունավետ իրականացումը:

Վեցերորդ դեպքում չորս ամիս առաջ սեռափոխության վիրահատության ենթարկված անձին հետապնդել է դասընկերը, ով բնակվում է հարևանությամբ: Նա, մասնավորապես, տեղեկանալով անձի սեռափոխության և արտաքին տեսքի փոփոխության մասին, սկսել է պարբերաբար անհանգստացնել նրան և նրա ընտանիքին: Նա պարբերաբար ներխուժում է անձի բնակարան, կամ հանդիպում դրսում, հնչեցնում տարբեր բնույթի հայհոյանքներ, սպառնալիքներ և արժանապատվությունը նսեմացնող արտահայտություններ՝ պնդելով որ տրանս անձը հեռանա իր բնակավայրից: Վերջինս դիմել է ոստիկանություն մի քանի անգամ, սակայն դեռևս որևէ միջոց չի ձեռնարկվել:

Սպառնալիք չհանդիսացող հոգեբանական բռնության արձանագրված երկու դեպքերը ևս տեղի են ունեցել կրթական հաստատությունում, որը չափազանց մտահոգիչ է՝ հաշվի առնելով կրթական հաստատության բացարձակ անգործությունը թե նմանատիպ իրավիճակները կանխելու, թե հասցեավորելու

ուղղությամբ:

Այս և բռնության այլ դեպքերը ցույց են տալիս անչափահասների նկատմամբ իրականացվող շարունակական բռնության միջավայրը դպրոցում: Այն, մասնավորապես, դրսևորվում է մեկուսացման, ծաղրի, նվաստացման և համակարգային բուլիինգ այլ միջոցներով, ինչը այս պարագայում և նախկինում արձանագրված դեպքերում ևս հանգեցրել են նրան, որ անձը ստիպված է եղել լքել դպրոցը:

Այս դեպքերը վկայում են՝

- կրթական հաստատություններում հակախտրական քաղաքականությունների բացակայության կամ ոչ արդյունավետ կիրառման մասին,
- ուսուցիչների և դպրոցի ղեկավարության կողմից պատշաճ արձագանքի բացակայության մասին,
- խտրականության երկարաժամկետ սոցիալական հետևանքների մասին, այդ թվում՝ կրթությունից փաստացի դուրս մղում:

Դեպքերը վկայում են, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ վիրավորանքները, սպառնալիքները, նվաստացումը և հոգեբանական բռնությունը հասարակության տարբեր շերտերում հաճախ ընկալվում են որպես «ընդունելի» կամ «արդարացված» վարքագիծ: Խտրական վերաբերմունքը հաճախ դրսևորվում է բացահայտ, առանց պատասխանատվության վախի, ինչը նպաստում է նման վարքագծի վերարտադրմանը: Սա վկայում է հանրային մակարդակում խտրականության կանխարգելման և հանդուրժողականության սերմանմանն ուղղված քաղաքականության բացակայության մասին:

Վերլուծված դեպքերում ակնհայտ է անձանց անվտանգության ապահովման համակարգային ձախողումը: Սպառնալիքները, հետապնդումը և կյանքի ու առողջության դեմ ուղղված վտանգները հաճախ մնում են առանց պատշաճ արձագանքի կամ կանխարգելիչ միջոցների: Սա հատկապես սուր է առավել խոցելիություն ունեցող խմբերի, այդ թվում՝ անչափահասների և տրանս անձանց դեպքում, որոնց համար անվտանգ միջավայրի բացակայությունը ունի ծանր և երկարաժամկետ հետևանքներ:

Կրթական հաստատություններում խտրականության դրսևորումները վկայում են, որ բացակայում են հստակ հակախտրական քաղաքականություններ, վաղ արձագանքման մեխանիզմներ և մասնագիտական կարողություններ: Բուլիինգի և հոգեբանական բռնության շարունակականությունը հանգեցնում է կրթությունից փաստացի դուրս մղման, ինչը, բացի անձի մասնավոր կյանքի իրավունքի նկատմամբ ներգործությունից, խախտում է ոչ միայն հավասարության, այլև կրթության իրավունքը:

Դեպքերից բխում է, որ ՍԿԳԻ վերաբերյալ տեղեկատվության հարկադրաբար բացահայտման սպառնալիքը լայնորեն կիրառվող ճնշման միջոց է: Անձնական կյանքի, գաղտնիության և տվյալների պաշտպանության անարդյունավետությունը խորացնում է խոցելիությունը և մեծացնում բռնության և շանտաժի ռիսկերը:

Դեպքերը ևս մեկ անգամ հաստատում են խտրականության դեմ համապարփակ օրենքի անհրաժեշտությունը, որը հստակ կսահմանի խտրականության հասկացությունը, տեսակները, պաշտպանության մեխանիզմները և պատասխանա-

տվության ձևերը: ՍԿԳԻ չներառումը պաշտպանվող հատկանիշների շարքում նպաստում է իրավական անորոշությանը և գործնական անպաշտպանությանը:

Խտրականության շարունակական ազդեցությունը դրսևորվում է լուրջ հոգեբանական հետևանքներով՝ վախ, ինքնամեկուսացում, սթրես, կրթությունից կամ հասարակական կյանքից դուրս մղում: Պետական մակարդակով բացակայում են թիրախային հոգեբանական աջակցության ծրագրեր, որոնք հաշվի կառնեն խտրականության զոհ դարձած ԼԳԲՏ+ անձանց առանձնահատուկ կարիքները:

ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄ. ԱՏԵԼՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

Խոսքի ազատությունը ժողովրդավարական հասարակության հիմնարար իրավունքներից է: Միաժամանակ, խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է սահմանափակումների՝ այլ անձանց իրավունքներն ու արժանապատվությունը պաշտպանելու նպատակով: Այն չի կարող ներառել ատելության խոսքը, որը խախտում է այլոց իրավունքները և կարող է հանգեցնել խտրականության, թշնամանքի կամ բռնության:

Ատելության խոսքը չունի մեկ համընդհանուր սահմանում, սակայն միջազգային մարմինների մեկնաբանություններով այն ներառում է արտահայտման այն բոլոր ձևերը, որոնք տարածում, խրախուսում կամ արդարացնում են անհանդուրժողականության վրա հիմնված ատելությունը, ներառյալ՝ փոքրամասնությունների նկատմամբ թշնամական կամ նվաստացուցիչ վերաբերմունքը:[33] ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագիրը մի կողմից երաշխավորում է արտահայտման ազատությունը, մյուս կողմից պարտադրում է օրենքով արգելել այն խոսքը, որը հրահրում է խտրականություն, թշնամանք կամ բռնություն:[34]

Ատելության խոսքի վտանգավորության գնահատումը իրականացվում է մի շարք գործոնների համակցված վերլուծությամբ, այդ թվում՝ խոսքի համատեքստը, հեղինակի դերը և ազդեցությունը, նպատակը, բովանդակությունը, տարածման միջոցներն ու լսարանը, ինչպես նաև իրական վնասի կամ ռիսկի առկայությունը: Այս մոտեցումը ամրագրված է Ռաբաթի գործողությունների պլանում, որը պետություններին առաջարկում է վեցաստիճան թեստ՝ որոշելու համար պատասխանատվության անհրաժեշտությունը:[35]

Հայաստանում, որտեղ հասարակական վերաբերմունքը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ գերազանցապես բացասական է, ատելության խոսքը, անգամ թվացյալ անվնաս բովանդակությամբ, կարող է խորացնել հասարակական բևեռացումն ու նպաստել բռնությանը: Հատկապես վտանգավոր է այն դեպքը, երբ ատելության խոսքը հնչեցվում է պետական պաշտոնատար անձանց կողմից, քանի որ դա խթանում է անպատժելիության մթնոլորտը: Չնայած դրան՝ նման դեպքերը գործնականում չեն հանգեցնում պատասխանատվության:

Ներպետական մակարդակում քրեական օրենսդրությունը նախատեսում է պատասխանատվություն ատելության խոսքի առավել ծանր դրսևորումների՝ հատկապես բռնության հրապարակային կոչերի կամ դրանց արդարացման

33 Նախարարների կոմիտեի թիվ R (97) 20 հանձնարարական Ատելության խոսքի վերաբերյալ. 1997. https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=0900001680505d5b (անգլերեն)
34 ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966, հոդված 19(2), https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-civil-and-political-rights (անգլերեն)
35 Գործողությունների Ռաբաթ պլան, հասանելի հետևյալ հղմամբ. https://www.ohchr.org/Documents/Issues/Opinion/SeminarRabat/Rabat_draft_outcome.pdf (անգլերեն)

համար:[36] Սակայն այդ նորմերը գործնականում արդյունավետ չեն կիրառվում ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ուղղված ատելության խոսքի պարագայում: Իրավապահ մարմինները հաճախ դա գնահատում են որպես արտահայտման ազատության իրացում կամ ոչ իրական վտանգ:

«Փինք» ՀԿ-ն 2025 թ.-ի ընթացքում իրականացրել է բռնության հրապարակային կոչերը, բռնությունների արդարացումը և քարոզը քրեականացնող 330-րդ հոդվածի կիրառման հետազոտություն՝ դուրս բերելու համար, 2020թ-ից ի վեր արձանագրված դեպքերը, դրանց քննության ընթացքը, հոդվածի կիրառման պրակտիկան և արդյունավետությունը ԼԳԲՏ+ անձանց պաշտպանության նպատակով:[37]

Այդ ուսումնասիրության շրջանակում ՀՀ քննչական կոմիտեին ուղղվել է պաշտոնական հարցում՝ պարզելու համար, թե վերջին հինգ տարիների ընթացքում քանի վարույթ է նախաձեռնվել հին քրեական օրենսգրքով նախատեսված՝ 226.2-րդ հոդվածով և նորի՝ 330-րդ հոդվածով նախատեսված հանցակազմերի հիմքով, դրանցից քանիսն են վերածվել քրեական գործերի, քանիսն են ուղարկվել դատարան մեղադրական եզրակացությամբ և քանիսով են կայացվել մեղադրական դատավճիռներ: Քննչական կոմիտեի տրամադրած պատասխանից պարզվել է, որ նշված հոդվածների կիրառման վերաբերյալ որևէ համապարփակ տվյալներ չեն հավաքագրվում, և վիճակագրություն չի վարվում:

Ուսումնասիրելով դատական գործերի հրապարակային հարթակում առկա տեղեկատվությունը, պարզ է դարձել, որ դրանք վերաբերվում են քաղաքական մեկնաբանություններին: Մասնավորապես, դրանց ճնշող մեծամասնությունը ուղղված է եղել վարչապետ Նիկոլ Փաշինյանի կամ նրա քաղաքական թիմի դեմ: Միայն մեկ գործով խոսքը վերաբերում էր ակտիվիստների դեմ ուղղված արտահայտություններին, որոնք հնչեցվել էին քաղաքական գործչի կողմից, սակայն գործը կարճվել է պատասխանատվության վաղեմության ժամկետի լրանալու հիմքով: Եվս մեկ դեպքում արտահայտությունները ուղղված են եղել նախկին նախագահներ Ռոբերտ Քոչարյանի, Սերժ Սարգսյանի և նրանց քաղաքական թիմի դեմ. տվյալ գործով ամբաստանյալը ընդունել է մեղքը, և համաձայնության վարույթի շրջանակում նրան նշանակվել է տուգանք:

Այսպիսով, կարելի է արձանագրել, որ ՍԿԳԻ հիմքով ատելության խոսքի, բռնության հրապարակային կոչերի, դրանց արդարացման կամ քարոզչության որևէ դեպք իրավապահ մարմինների կողմից կամ չի արձանագրվել, կամ առնվազն չի հասել դատական քննության փուլին:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի քաղաքական խոսքի պաշտպանության վերաբերյալ դատարանների մոտեցումը: Մի շարք գործերում դատարանը հղում է կատարել ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքին՝ ընդգծելով, որ քաղաքական խոսքը ենթակա է առավել լայն պաշտպանության, և որ նույնիսկ սուր ու կոշտ քննադատությունը քաղաքական համատեքստում կարող է պաշտպանված լինել արտահայտման ազատությամբ, եթե այն չի պարունակում բռնության կամ ատելության հրահրում: Այս դիրքորոշումը, այնուամենայնիվ, սխալ մեկնաբանության արդյունքում հիմք է հանդիսացել օրենքի ոչ միատեսակ կիրառության համար այնպիսի գործերում, որտեղ խոսքի հեղինակները եղել

36 ՀՀ Քրեական օրենսգիրք, հոդված 330. https://www.arlis.am/documentview.aspx?docid=153080
37 «Փինք» իրավապաշտպան ՀԿ, Բռնության հրապարակային կոչերի համար պատասխանատվություն նախատեսով հոդվածի կիրառումը 2020-2025 թթ. https://pinkarmenia.org/wp-content/uploads/2025/09/hatespeech-report_20-25.pdf

են քաղաքական կամ հասարակական գործիչներ: Այսպիսով, քաղաքական խոսքի պաշտպանությունը մեկնաբանվել է ոչ թե որպես քաղաքական բնույթի քննադատության պաշտպանություն, այլ որպես քաղաքական գործիչների կողմից հնչեցված խոսքի պաշտպանություն:

Այս մոտեցումը կարող է ձևավորել վտանգավոր նախադեպ, քանի որ արտահայտման ազատության ընդլայնված պաշտպանությունը վերաբերում է ոչ թե խոսքի հեղինակին, այլ խոսքի բնույթին և հասցեատիրոջը:

Միևնույն ժամանակ տարվա ընթացքում տեղի է ունեցել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ թշնամանք սերմանող հերթական աղմկահարույց դեպքը, որը իրավապահ մարմինների կողմից որևէ գնահատականի չի արժանացել: Մասնավորապես, 2025 թվականի մարտի 30-ին Գյումրիում որպես քաղաքապետի թեկնածու առաջադրված Վարդան Ղուկասյանը առցանց հեռարձակվող մամուլի ասուլիսի ընթացքում՝ բազմաթիվ լրագրողների ներկայությամբ, արել է հետևյալ հայտարարությունը. «Եթե դուք էլ եք զզվում ԼԳՏՊ-ից, եկեք, կանգնեք իմ կողքը, տեսնեք, թե ես ինչ կբերեմ ԼԳՏՊ-ի գլխին: Ու մի բան էլ եմ ասում. եթե հայոց եկեղեցին հանկարծ մի հատ եվրոպացիների պես միասեռականներին ամուսնություն անի, ես բարձրաձայն ասում եմ. ուրեմն եկեղեցու մեջ կգնդակահարեմ էդ քահանային»:[38]

Այնուամենայնիվ, չնայած նրան, որ այս դեպքի առնչությամբ ներկայացվել է հաղորդում հանցագործության մասին երեք տարբեր կազմակերպությունների կողմից, քննչական մարմինը կայացրել է որոշում առ այն, որ այս խոսքը բռնության կոչ քամ քարոզ չի պարունակում:

Վարդան Ղուկասյանը ընտրվել է որպես քաղաքապետ և շարունակել իր խտրական արտահայտությունները կանանց և ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, ինչը, սակայն որևէ արձագանք պետական կառավարման մարմինների կողմից չի ստացել:

Այսպիսով, ՍԿԳԻ հիմքով բռնության կոչերի, դրանց արդարացման կամ քարոզչության դեպքերն իրավապահների կողմից չեն հասցեավորվել, իսկ առանձին նախնական վարույթները չեն հասել դատարան մեղադրական եզրակացությամբ:

Իրավապահ մարմինների գործելակերպը պայմանավորված է իշխանությունների քաղաքական դիրքորոշմամբ, որը փաստացի չի դրսևորում շահագրգռվածություն ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության հարցում: Թեև 2018թ-ից հետո պետական պաշտոնյաների կողմից բացահայտ ատելության խոսքը նվազել է, դրանց նկատմամբ անգործությունը և ԼԳԲՏ+ թեմաների քաղաքական շահարկումը հանգեցնում են նույն հետևանքներին՝ իրավական պաշտպանության արդյունավետ մեխանիզմների բացակայության և ԼԳԲՏ+ անձանց կյանքի անապահով պայմանների պահպանման:

Այս պայմաններում անհրաժեշտ է, որ հենց իշխանության մարմինները պատշաճ իրավական գնահատական տան ատելության խոսքի բոլոր դրսևորումներին և հստակ ուղերձ փոխանցեն իրավապահ մարմիններին՝ ապահովելու դեպքերի լիարժեք, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Միևնույն ժամանակ, ինչպես նախորդ տարիներին, այս տարվա ընթացքում

38 Եկեղեցու մեջ կգնդակահարեմ այդ քահանային. բարձրաձայն ասում եմ. Վարդան Ղուկասյանը ԼԳԲՏ քարոզչության մասին. 31.03.2025, https://armtimes.com/hy/article/310901

ևս արձանագրվել են քաղաքական շահարկումների դեպքեր, երբ թե իշխող քաղաքական ուժի, թե ընդդիմադիր քաղաքական ու հասարակական գործիչ-ների, լրատվամիջոցների կողմից փորձ է արվել ԼԳԲՏ+ անձ լինելը կամ համայնքի հետ ասոցացումը ներկայացնել որպես բացասական երևույթ՝ նպատակ ունենալով վարկաբեկել անձին: «Փինք» ՀԿ-ն պարբերաբար ստիպված է լինում հրապարակային հայտարարությամբ դիմել պետական մարմիններին՝ հասարակության շրջանում ատելություն և անհանդուրժողականություն սերմանող խոսքից ձեռնպահ մնալու, ինչպես նաև այլոց կողմից հնչած ատելության խոսքին պատշաճ արձագանքելու և անհրաժեշտության դեպքում իրավական գնահատական տալու պահանջով:

ԲԱԺԻՆ 2.

ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Կազմակերպության կողմից արձանագրվել է 2 դեպք, երբ իրավապահ մարմինների կողմից դրսևորվել է լիազորությունների անցում, ինչպես նաև դեպք, երբ ծաղրի է ենթարկվել ապաստան հայցած անձը միգրացիոն ծառայության աշխատակիցների կողմից:

Մի դեպքում թմրանյութերի պահման կասկածանքով բերման ենթարկված անձից պահանջել են, որ բացի սոցիալական ցանցերում անձնական էջերը: Արդյունքում՝ տեղեկացել են, որ անձը նույնասեռ կապերի կամ սոցիալական շփումների մեջ է եղել այլ տղամարդկանց հետ, որի պատճառով էլ սկսել են խտրական ու վիրավորական արտահայտություններ անել: Պարզելով, որ անձը թմրամիջոցների հետ կապ չունի, մի քանի ժամ անց բաց են թողել: Անձը հայտնում է, որ ոստիկանության բաժնում տվել են 3 փաստաթուղթ ստորագրելու, որոնց բովանդակությանը վերջինս չի կարողացել ծանոթանալ: Նրան չեն բացատրել իր իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև այդ փաստաթղթերի բովանդակությունը:

Իրավական խորհրդատվության դիմելիս անձը հայտնել է, որ վախեցել է պահանջել, որ որևէ բացատրություն ոստիկանության աշխատակիցներից իր իրավունքների և ստորագրած փաստաթղթերի բովանդակության մասին, քանի որ վախեցել է, որ ավելի վատ հետևանքներ դա կունենա, ավելի վատ վերաբերմունքի կարժանանա կամ իր անձնական կյանքի մասին տեղեկությունները հայտնի կդառնան այլ անձանց, մասնավորապես՝ ընտանիքի անդամներին:

Այս դեպքերի և նախորդ բաժնում նկարագրված իրավիճակներում տուժողների կողմից բերված իրավապահներին չդիմելու հիմնավորումների վերլուծությունը ցույց է տալիս խիստ մտահոգիչ իրավիճակ՝ ՍԿԳԻ հիմքով խտրական վերաբերմունքի դրսևորում պետական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից: Այս հանգամանքը առանձնահատուկ ծանրություն է հաղորդում խախտումներին, քանի որ խոսքը վերաբերում է այն կառույցներին, որոնք պարտավոր են ապահովել մարդու իրավունքների պաշտպանությունը և օրենքի գերակայությունը:

Դեպքերը վկայում են, որ պետական մարմինների որոշ ներկայացուցիչներ ոչ միայն զերծ չեն մնում խտրական վերաբերմունքից, այլև իրենց պաշտոնեական դիրքն օգտագործում են ծաղր, նվաստացում և արժանապատվությունը խաթարող հարցադրումներ հնչեցնելու համար: Նման վարքագիծը խտրականությանը հաղորդում է «լեգիտիմ» բնույթ և խորացնում հասարակության մեջ այն ընկալումը, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ նվաստացուցիչ վերաբերմունքը թույլատրելի է: Մյուս կողմից այն խորացնում է ԼԳԲՏ+ անձանց անվստահությունը համակարգի նկատմամբ, ինչով էլ հիմնավորվում են բռնության և խտրականության դեպքերի մասին իրավապահ մարմիններին հայտնելու վախերը:

Պետական ծառայությունների մատուցման ընթացքում արտաքին տեսքի կամ գենդերային արտահայտման հիմքով ծաղրը և նվաստացումը հակասում են հավասարության և իրավունքի գերակայության սկզբունքներին: Նման վերաբերմունքը ստեղծում է խոչընդոտներ իրավական պաշտպանության մեխանիզմներից օգտվելու համար և փաստացի սահմանափակում է անձանց իրավունքը՝ ազատ և անվտանգ օգտվելու պետական ծառայություններից:

Ինչպես այս, այնպես էլ նախորդ տարիներին արձանագրված լիազորությունների անցման և մարդու հիմնարար իրավունքների և արժանապատվության նկատմամբ ակնհայտ անհարգալից վերաբերմունքը դրսևորվել է իրավապահ

մարմինների կողմից տուժողներին սեռական բնույթի հարցադրումների, անձնական կյանքի մանրամասների մեջ ապօրինի ներխուժման, սեռական ակնարկների և նվաստացուցիչ արտահայտությունների տեսքով, որոնք կարող են հասնել անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքի շեմին:[39] Անձնական կյանքի, սեռական վարքագծի, զուգընկերային հարաբերությունների վերաբերյալ հարցադրումները, ինչպես նաև սեռական հարաբերության առաջարկները որևէ իրավաչափ նպատակ չեն հետապնդում և չեն կարող համարվել համաչափ կամ անհրաժեշտ: Միջազգային չափորոշիչների համաձայն՝ նման վերաբերմունքը արգելված է բացարձակապես և չի կարող արդարացվել որևէ հանգամանքով, այդ թվում՝ ազգային անվտանգությամբ կամ վարչարարական նպատակներով:

Այնուամենայնիվ, այս դեպքերի առկայությունը վկայում է պետական միջամտության կամայականության և վերահսկողության մեխանիզմների անարդյունավետության մասին:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ բացակայում են արդյունավետ մեխանիզմներ պետական մարմինների աշխատակիցների կողմից խտրական վարքագծի կանխարգելման, արձանագրման և պատժման համար: Ներքին վերահսկողու-թյան, անկախ քննության և պատասխանատվության հստակ մեխանիզմների բացակայությունը նպաստում է անպատժելիության մշակույթի պահպանմանը:

Դեպքերը վկայում են, որ պետական մարմինների աշխատակիցների շրջանում առկա է ՍԿԳԻ վերաբերյալ խորքային անտեղյակություն և նախապաշարմունք: Սա ցույց է տալիս մարդու իրավունքների, խտրականության արգելքի և մասնագիտական էթիկայի վերաբերյալ պարտադիր և շարունակական վերապատրաստման բացակայությունը:

Երբ խտրական վերաբերմունքը գալիս է հենց պետական մարմիններից, այն ունի առավել խորը և երկարատև ազդեցություն: Նման դեպքերը ձևավորում են վախի միջավայր, որտեղ անձինք խուսափում են պետական կառույցների հետ շփումից, հրաժարվում են իրենց իրավունքների իրացումից և չեն դիմում բողոքարկման մեխանիզմներին՝ վախենալով կրկնակի նվաստացումից կամ հետապնդումից:

Այսպիսով, իրավապահ մարմիններին բողոք ներկայացնելուց հրաժարվելու հիմնավորումների համադրումը ցույց է տալիս մի շարք կառուցվածքային, հոգեբանական և սոցիալական խոչընդոտներ, որոնք խաթարում են ԼԳԲՏ+ անձանց վստահությունը իրավապահ համակարգի նկատմամբ և նվազեցնում նրանց պատրաստակամությունը՝ դիմելու ոստիկանությանը կամ այլ մարմինների:

Հիմքային խնդիրները երեքն են՝ Ա. անվստահություն, Բ. անարդյունավետ քննության փորձառություն և Գ. հետագա բռնության կանխարգելման ուղղությամբ միջոցներ չձեռնարկելը: Այս գործոնների համադրությունը ստեղծում է իրավիճակ, երբ ԼԳԲՏ+ անձանց համար իրավապահ մարմիններին դիմելը ընկալվում է ոչ թե որպես պաշտպանվելու միջոց, այլ որպես ռիսկային քայլ:

39 ՄԱԿ Մարդու իրավունքների կոմիտե, Ընդհանուր մեկնաբանություն թիվ 20, հոդված 7, HRI/GEN/1/Rev.9 (Vol. I), §3

Ա. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՔԱՅԻՆ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆ

ԼԳԲՏ+ անձանց շրջանում իրավապահ համակարգի նկատմամբ անվստահությունը երկար տարիների փորձառության արդյունք է, ընդ որում՝ ոչ միայն անհատական, այլ նաև համայնքային փորձառության: Մասնավորապես, ԼԳԲՏ+ անձանց շրջանում տարածված են պատմություններ ոստիկանների կողմից ոչ համարժեք, երբեմն՝ կողմնակալ վերաբերմունքի մասին: Նույնիսկ եթե անձը նման վերաբերմունքի անձամբ չի հանդիպել, այնուամենայնիվ համայնքում շրջանառվող փորձառությունները ձևավորում են ընդհանուր անվստահություն:

ԼԳԲՏ+ անձինք հաճախ վախենում են, որ դիմելու դեպքում իրենց ՍԿԳԻ-ն կդառնա քննության առարկա, հաճախ տրվում են անձնական կյանքին վերաբերող հարցեր, ներառյալ՝ անձի սեռական փորձառության վերաբերյալ, հատկապես այն պարագայում, երբ տուժողը հարցաքննությանը ներկայանում է առանց ներկայացուցչի մասնակցության: Անձնական կյանքին վերաբերող հարցերը հիմնականում չունեն գործի արդյունավետ քննության շահից բխող որևէ անհրաժեշտություն, այլ պարզապես ծառայում են իրավապահ մարմնի ներկայացուցչի անձնական հետաքրքրությունների բավարարմանը և հանգեցնում են տուժողի մասնավոր կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի խախտման: Նման ոչ զգայուն վերաբերմունքի արդյունքն է նաև տուժողի ցանկության վերացումը՝ վստահելու իր հետ պատահածի մանրամասները: Բացի այդ, կա մտավախություն, որ ոստիկանությունը կարող է կողմնակալ վերաբերմունք ցուցաբերել կամ նույնիսկ՝ իրենց մեղադրել:

ԼԳԲՏ+ անձինք հաճախ որոշումներ են կայացնում իրենց շրջապատի փորձի վրա հիմնվելով: Եթե համայնքի ներսում տարածված է պատկերացումը, որ ոստիկանությունը անարդյունավետ է կամ հալածող վերաբերմունք ունի, ապա այդ ընկալումը դառնում է որոշիչ, նույնիսկ երբ անձն իր կյանքում նման իրավիճակում չի եղել: Մարդիկ հաճախ նշում են, որ իրենց ընկերներն են դիմել և վատ վերաբերմունքի են արժանացել. այսպիսի պատմությունները վախ և անվստահություն են սերմանում: Այսպես ձևավորվում է համայնքի ներսում փոխադարձ խորհրդատվության պրակտիկա, որը կանխում է իրավակիրառ մարմիններին դիմելը:

Առաջին դիմումից հետո երկրորդ անգամ դիմելու մտահոգություն

Փաստագրված դեպքերի վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե անձը մեկ անգամ արդեն դիմել է և բախվել է անարդյունավետության, անուշադրության կամ խտրական վերաբերմունքի, նա սովորաբար հրաժարվում է կրկին դիմել:

Սա ցույց է տալիս համակարգային անարդյունավետությունը՝ ինչպես ծառայողական պարտավորություններից բխող արձագանքի, այնպես էլ մարդկային վերաբերմունքի մակարդակում: Նույնիսկ մեկ բացասական փորձը կարող է երկարաժամկետ ազդեցություն ունենալ՝ կանխելով հետագա դիմումները:

Անձնական տեղեկատվության տարածման վախ

Անվստահությունը կապված է ոչ միայն վատ վերաբերմունքի հետ, այլ նաև տուժողների սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկության տարածման հետ: Փորձը ցույց է տալիս, որ հաճախ այդ տեղեկությունները հասնում են տուժողի ընտանիքին և բռնության շղթան շարունակվում է ընտանեկան բռնության տեսքով: Այս խնդիրը հատկապես առկա է անչափահաս տուժողների պարագայում, ում ծնողներին տեղեկացնելը փաստացի իրականացվում է օրենքի շրջանակներում՝ որպես տուժողի օրինական ներկայացուցիչներ:

Անձնական տեղեկատվության տարածման ռիսկը հատկապես բարձր է մարզային համայնքներում, որոնց բնակիչները առավել փոխկապակցված են՝ պայմանավորված քաղաքի կամ գյուղի բնակչության չափով և կենսաձևով: Առավել փոքր համայնքներում ոստիկանության ծառայողները անձնական ընկերային հարաբերությունների մեջ են գտնվում բնակիչների հետ, ինչն էլ առավել դժվարացնում է ծառայությունից բխող պարտավորությունների պրոֆեսիոնալ իրականացումը:

Բ. ԴԵՊՔԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

Փորձը ցույց է տալիս, որ անգամ այն դեպքերում, երբ տուժողները դիմում են իրավապահ մարմիններին, չի իրականացվում դեպքի ամբողջական լրիվ և օբյեկտիվ քննություն: Այսպես՝

- Դեպքերը չեն արձանագրվում իրենց ամբողջ ծավալով և ատելության շարժառիթով կատարված արարքների համար միջազգային փորձի վրա հիմնված ստանդարտ ձևաչափով, հետևաբար հատուկ ուշադրություն չի դարձվում նաև արարքի շարժառիթի գնահատման հիմք հանդիսացող ցուցիչների նույնականացմանն ու ապացուցողական նշանակություն ունեցող հանգամանքների մասնավորեցմանը:
- Արարքի որակման ընթացքում հաշվի չի առնվում հանցավորի շարժառիթը, այն է՝ անհանդուրժողականությունը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, ինչը քննության ուշադրությունից դուրս է թողնում էական նշանակություն ունեցող ապացույցները և փաստական տվյալներ՝ հանգեցնելով կիսատ քննության, հետևաբար նաև՝ ոչ արդարացի որոշման:
- Գործերի քննության տևողությունը սովորաբար հատում է ողջամիտի սահմանը, ինչի արդյունքում թե հանցավորն է իրեն համարում արդարացված, թե տուժողն է կորցնում իրավունքների վերականգնման հնարավորությունը: Այսպիսով, հաճախ սպառվում է նաև դեպքերի վաղեմության ժամկետը և հանցավորները մնում են անպատիժ:
- Ինչպես հասարակության, այնպես էլ իրավապահ մարմինների հոմոֆոբ աշխարհայացքի արդյունքում ԼԳԲՏ+ անձանց դեմ իրականացված հանցագործությունները հաճախ արդարացվում են, ինչը արտացոլվում է նաև իրավակիրառ մարմինների մոտեցումներում, ովքեր, մասնավորապես

բավարար լրջությամբ չեն մոտենում արարքին և չունեն մոտիվացիա՝ պատասխանատվության ենթարկելու հանցավորներին:

Գ. ՀԵՏԱԳԱ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այս խնդիրը հատկապես ծանր դրության մեջ է դնում փակ հաստատություններում գտնվող տուժողներին: Ինչպես 2025թ-ին արձանագրված դեպքերում, այնպես նախկին տարիներին զինված ուժերում արձանագրված դեպքերից որևէ մեկի պարագայում տուժողը պատրաստ չի եղել դիմելու որևէ իրավական պաշտպանության՝ վստահ չլինելով, որ իր ներկայացրած բողոքը չի ծանրացնի իր դրությունը՝ խորացնելով բռնության կամ խտրականության ազդեցությունը իր ֆիզիկական և/կամ հոգեկան ամբողջականության նկատմամբ:

Հետագա բռնությունից պաշտպանության մեխանիզմները հատկապես կարևոր են ընտանեկան բռնության պարագայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տուժողները վերադառնում են բռնության միջավայր՝ հաճախ հնարավորություն չունենալով ինքնուրույն հոգալու իրենց բնակեցման և սոցիալական ապահովման խնդիրները:

Անչափահասների հատուկ խոցելիությունը

Անչափահաս ԼԳԲՏ+ անձանց իրավիճակը հատկապես զգայուն է.

- Նրանք չեն ցանկանում կապ հաստատել խնամքի կենտրոնների հետ՝ վախենալով նոր, անծանոթ միջավայրից, խտրականությունից, անձնական տեղեկատվության տարածումից կամ անբարենպաստ պայմաններից:
- Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընտանեկան բռնության պարագայում ծնողներն են հիմնական բռնարարները, օրենսդրական այս կարգավորումը, իհարկե, խոչընդոտ է հանդիսանում անչափահաս անձի իրավունքները ամբողջ ծավալով պաշտպանելու համար: Գործնականում փաստաբանին պարզապես թույլատրվում է ներկա գտնվել հարցաքննության ընթացքում: Սա նվազեցնում է նրանց պաշտպանվածության զգացումը, քանի որ իրավական պաշտպանությունը լիարժեք չէ, իսկ գործընթացների նկատմամբ վստահությունն ավելի է խաթարվում:
- Շատ անչափահասներ պարզապես չունեն այլ բնակավայր, ինչն ուժեղացնում է կախվածությունը իրենց վախերի ու անհարմարության նկատմամբ և թույլ չի տալիս դիմել ոստիկանությանը, նույնիսկ եթե վտանգը իրական է:

Երբ մի ամբողջ խոցելի խումբ կորցնում է իրավապահ համակարգի նկատմամբ վստահությունը, ձևավորվում է անպաշտպանության մշտական մթնոլորտ, որտեղ բռնությունը դառնում է կանխատեսելի, բայց ոչ պատժելի և ոչ կանխարգելվող, այն խախտում է պետության հիմնական պարտականությունը՝ ապահովել բոլոր քաղաքացիների անվտանգությունը և արդյունավետ միջոցների հասանելիություն՝ նրանց պաշտպանության համար:

ԻՐԱՎԱՊԱՀ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԱՆՎՍՏԱՀՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Իրավապահ համակարգի նկատմամբ անվստահության բարձր մակարդակը վտանգավոր է մի քանի առումներով

Անպատժելիության ինքնարտադրողական շղթա

Երբ տուժողները չեն դիմում իրավական պաշտպանության, իսկ դիմողների գործերը չեն քննվում արդյունավետորեն, բռնարարները ծանր հետևանքների չեն ենթարկվում: Անպատժելիությունը դառնում է նորմ, որը խրախուսում է նոր բռնություններ: Պետությունը փաստացի կորցնում է վերահսկողությունը սեփական իրավակարգի վրա:

Իրավական պաշտպանության միջոցների անհավասար հասանելիություն

Եթե քաղաքացիների մի խումբ զրկվում է պաշտպանություն ստանալու իրական հնարավորությունից, ապա օրենքի առջև հավասարությունը պարզապես դադարում է գործել: Սա վտանգում է պետության ինստիտուցիոնալ լեգիտիմությունը, քանի որ քաղաքացիների միջև ստեղծվում են պաշտպանվածության տարբեր աստիճաններ՝ խարսխված իրենց ինքնության վրա:

Մարդու արժանապատվության խաթարում

Անվտանգության, հարգանքի և արժանապատվության իրավունքը դառնում է թղթային՝ երբ ԼԳԲՏ+ անձինք իրենց զգում են միայնակ, անտեսված և հոգեբանորեն անպաշտպան: Ոստիկանությանը դիմելու վախը նշանակում է, որ նրանք ապրում են շարունակական սպառնալիքի մեջ՝ չունենալով ոչ ինստիտուցիոնալ, ոչ ընտանեկան ապահովություն:

Անչափահասների կրկնակի խոցելիություն

Երբ անչափահասները չեն կարողանում օգտվել անկախ իրավական աջակցության փաստացի իրավունքից, վտանգվում է նրանց ֆիզիկական ու հոգեկան անվտանգությունը: Սա կարող է հանգեցնել ոչ միայն այդ պահին պատճառված վնասի, այլև՝ երկարաժամկետ տրավմայի, որը ազդում է նրանց զարգացման, ինքնընկալման և սոցիալական ինտեգրման վրա: Պետությունը նման պայմաններում չի կատարում երեխաների պաշտպանության իր հատուկ, առաջնահերթ պարտավորությունները:

Հանրային առողջության ու հասարակական ներդաշնակության վտանգում

Անվստահությունն ու լռությունը մղում են համայնքին ներփակվելու, ինքնապահպանման ոչ միշտ առողջ մեխանիզմներ մշակելու և հանրային կյանքում մեկուսացվելու: Սա խորացնում է սոցիալական բևեռացումը, նպաստում ատելության խոսքի և ատելության հիմքով հանցագործությունների աճին:

Վախի ինստիտուցիոնալացում

Երբ քաղաքացու առաջին ռեակցիան բռնությանը պետությանը դիմելու փոխարեն համակերպվելն է, ապա երկիրը կորցնում է իր անվտանգային հիմքը: Վախն է դառնում կարգավորող ուժ, այլ ոչ թե օրենքը:

Այս ամենը միասին նշանակում է, որ խնդիրը զուտ անհատական կամ համայնքային չէ. այն համակարգային է և վերաբերում է պետության՝ իր բոլոր քաղաքացիների հիմնական իրավունքներն ապահովելու ունակությանը:

Եթե այս մթնոլորտը չվերափոխվի վստահության, հաշվետվողականության և արդյունավետ պաշտպանության համակարգի, ապա բռնությունը, խտրականությունը և անպատժելիությունը կմնան ինքնավերարտադրվող նորմ, որը վտանգի տակ է դնում ոչ միայն ԼԳԲՏ+ անձանց, այլև մարդու իրավունքների ամբողջական համակարգը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ՈՒՂՂՎԱԾ ԻՐԱՎԱՊԱՀ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎՍՏԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒՆ

Առաջարկվող քայլերը նպատակ ունեն լուծելու այն արմատական պատճառները, որոնք առաջացրել են ԼԳԲՏ+ անձանց անվստահությունն իրավապահների նկատմամբ՝ սկսած բացասական փորձառություններից մինչև իրավական մեխանիզմների արդյունավետություն:

Հիմնական նպատակը այն է, որ ԼԳԲՏ+ անձինք տեսնեն՝ իրենց անվտանգությունն ու իրավունքները իրավապահ համակարգի համար առաջնահերթություն են, ոչ թե երկրորդական հարց:

Իրավապահների վերապատրաստում ու զգայունության բարձրացում

- Կազմակերպել պարտադիր դասընթացներ ԼԳԲՏ+ անձանց իրավունքների, խտրականության արգելքի և խոցելի խմբերի հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Դասընթացները պետք է ներառեն իրական պատմություններ, գործնական դեպքեր և մասնագիտական էթիկայի ուսուցում:

Հատուկ կապի օղակների ներդնում կամ մասնագիտացած անձնակազմի ձևավորում

- Ոստիկանությունում կարող է ստեղծվել հաղորդակցման հատուկ պատասխանատու կամ ԼԳԲՏ+ համայնքի հետ հաղորդակցություն ապահովող անձ, ով պարբերաբար խորհրդակցություններ կվարի նաև հասարակական կազմակերպությունների հետ՝ հասկանալու համար հիմնական խնդիրներն ու ըստ իրավիճակի ձեռնարկելու միջոցներ՝ արագ արձագանքման և խնդիրների վերացման ուղղությամբ:
- Ապահովել ավելի անվտանգ, ոչ խտրական միջավայր և արագ արձագանքելու մեխանիզմ՝ ներառյալ ուղղորդում մասնագիտական աջակցության և անհրաժեշտության դեպքում՝ հասարակական կազմակերպություններին:

Գաղտնիության երաշխավորում

- Լրացուցիչ վերահսկման միջոցներ ձեռնարկել՝ առանց հիմնավորված իրավական ընթացակարգերի տվյալների չփոխանցման համար:
- Անձնական տեղեկատվության փոխանցման ցանկացած դեպքում իրականացնել ծառայողական քննություն՝ նախորդ կետում նշված հաղորդակցման մասնագետի վերահսկողության ներքո:

Անչափահասների համար հստակ ու պաշտպանիչ ընթացակարգեր

- Իրականացնել օրենսդրական փոփոխություն, որը թույլ կտա անչափահասին խնամակալության և հոգաբարձության մարմնի միջոցով լիազորել իրավապաշտպան կազմակերպության ներկայացուցչի՝ ներկայացնելու համար իր շահերը այն դեպքում, երբ բռնությունը տեղի է ունեցել օրինական ներկայացուցչի կողմից:
- Ստեղծել անվտանգ ապաստարաններ կամ համագործակցել հատուկ կենտրոնների հետ, որպեսզի ԼԳԲՏ+ անձինք, ում վերադարձը ընտանիք ապահով չէ, ապահովված լինեն կացարանով և կաշկանդված չլինեն բողոք ներկայացնելու հարցում:
- Հոգեբանական աջակցությունը դարձնել պարտադիր բաղադրիչ՝ ընտանեկան բռնության ենթարկված անչափահասներին ոստիկանությունում լսելիս:

Դեպքերի քննության արդյունավետության մոնիթորինգ

- Ներդնել որպես խտրականությամբ զուգորդված իրավախախտում զեկուցված դեպքերի ընթացքի անկախ մոնիթորինգի մեխանիզմ, ինչը կնպաստի գործերի քննության արդյունավետությանն ու կխթանի վստահության վերականգնումը:

Պաշտոնական ուղերձներ՝ ոչ խտրական վերաբերմունքի մասին

- Իրավակիրառ մարմինները պետք է հստակ ու հրապարակային հայտարարեն, որ հոմոֆոբ կամ տրանսֆոբ գործողությունները անընդունելի են, և ԼԳԲՏ+ անձինք պաշտպանված են օրենքով. սա թույլ կտա համակարգի ծառայողներին փոխանցել հստակ ուղերձ առ այն, որ իրենց պարտավորությունն է ԼԳԲՏ+ անձանց բողոքները ենթարկել լրիվ և անաչառ քննության:

Հեշտ և մատչելի հաղորդման ուղիներ

- Ստեղծել բողոքների ներկայացման առցանց հարթակ, ինչպես նաև անանուն հաղորդում ներկայացնելու հնարավորություն, որտեղ անձինք կարող են հաղորդել իրադարձությունները՝ առանց անմիջական շփման:

ԲԱԺԻՆ 3.
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռազմավարական դատավարությունները իրավապաշտպանության ոլորտում կարևոր նշանակություն ունեն, քանի որ դրանք նպատակ ունեն ոչ միայն վերականգնելու անձի խախտված իրավունքները, այլ նաև բացահայտելու և հասցեավորելու համակարգային խնդիրները մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում: Նման դատավարությունները սովորաբար ընտրվում են այն դեպքերում, երբ առկա է իրավական բաց, խտրական մոտեցում կամ վտանգավոր պրակտիկա, և մեկ գործի միջոցով հնարավոր է ազդեցություն ունենալ ավելի լայն խնդրի լուծումներ տալու վրա:

Ռազմավարական դատավարությունները նպաստում են դատական նախադեպերի ձևավորմանը, որոնք հետագայում կարող են կիրառվել նմանատիպ դեպքերում՝ ապահովելով իրավական կանխատեսելիություն և հավասար պաշտպանություն: Դրանք նաև կարևոր գործիք են պետական մարմինների գործողությունների կամ անգործության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու, իրավակիրառ մարմիններին մարդու իրավունքների չափորոշիչների համապատասխան գործելակերպ պարտադրելու և օրենսդրական կամ ինստիտուցիոնալ փոփոխությունների խթանման համար:

Բացի իրավական արդյունքներից, այն կարևոր դեր է խաղում հանրային իրազեկման գործում՝ ուշադրություն հրավիրելով մարդու իրավունքների խախտումների վրա, ձևավորելով հանրային քննարկում և նպաստելով խտրականության ու անհանդուրժողականության նվազեցմանը: Այսպիսով, դրանք հանդիսանում են մարդու իրավունքների պաշտպանության համալիր և ազդեցիկ մեխանիզմ՝ հատկապես այն դեպքերում, երբ խախտումները վերաբերում են խոցելի կամ մարգինալացված խմբերին և պահանջում են համակարգային արձագանք:

«Փինք» ՀԿ-ն երկար տարիներ կիրառում է այս գործիքը, և առաջին արդյունքները գրանցվել են Օգանեզովան ընդդեմ Հայաստանի գործով,[40] որի քննությունը տևեց շուրջ մեկ տասնամյակ, սակայն ի վերջո հանգեցրեց Հայաստանում ԼԳԲՏ+ անձանց իրավունքների խախտումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային վճռի: Եվրոպական դատարանի վճիռը, մասնավորապես պետությանը պարտավորեցնում է միջոցներ ձեռնարկել ոչ միայն անհատական մակարդակով՝ վերականգնելու համար տվյալ դեպքից տուժած անձի իրավունքները, այլ նաև ընդհանուր՝ օրենսդրական կամ գործնական մակարդակում՝ ուղղված համակարգային խնդիրների վերացմանը: Այս և միջազգային այլ կառույցների հետ շարունակաբար տարվող ջատագովության արդյունքում է, որ

- նոր Քրեական օրենսգրքում ավելացվեց ատելության շարժառիթով կատարված հանցագործությունների համար առավել ծանր պատասխանատվություն նախատեսող կարգավորումներ, ինչը հնարավորություն է տալիս ՍԿԳԻ պայմանավորված ատելության շարժառիթով կատարված հանցագործությունները ևս որակել որպես այդպիսին,
- ոստիկանության, քննիչների և դատախազների համար պարբերաբար անցկացվում են վերապատրաստման դասընթացներ՝ ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի շուրջ, ինչը ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության առումով դեռևս տեսանելի արդյունք չի տալիս, սակայն կարող է դրական փոփոխությունների բարենպաստ միջավայր ստեղծել,

40 ՄԻԵԴ վճիռ Օգանեզովան ընդդեմ Հայաստանի. https://hudoc.echr.coe.int/eng?i=001-219523

- հավաքագրվում են տվյալներ ատելության հիմքով հանցագործությունների վերաբերյալ, չնայած այն հանգամանքին, որ դեպքերի պատշաճ արձանագրման գործիք դեռևս ներդրված չէ և ըստ այդմ վիճակագրություն չի վարվում:

Այսինքն, կարելի է փաստել, որ թեև խորը արմատավորված խնդիրները շարունակում են առկա լինել, այնուամենայնիվ, ի թիվս այլ ադվոկացիոն միջոցառումների՝ ռազմավարական դատավարության դատավարությունների միջոցով հնարավոր է լինում պետության դրդելու որոշակի դրական միջոցառումների:

Հաջորդող բաժիններում ներկայացված են որոշ ընթացիկ ռազամավարական դատավարություններ:

ՄԻՆԱՍՅԱՆԸ ԵՎ ԱՅԼՈՔ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

2025 թվականի հունվարի 7-ին ՄԻԵԴ-ը հրապարակել է «**Մինասյանը և այլոք ընդդեմ Հայաստանի»** գործով իր վճիռը՝ արձանագրելով ՀՀ կողմից մարդու հիմնարար իրավունքների խախտում:[41]

Գործը վերաբերում է «Իրավունք» թերթի կողմից 2014 թվականի մայիսի 17-ին հրապարակված «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լոբբինգի շահերը. Ազգի և պետության թշնամիների սև ցուցակը» վերնագրով հոդվածին և դրան հաջորդած նույնաբովանդակ հրապարակումներին: Նշված հոդվածներում թերթը «սև ցուցակում» ներառել էր մի շարք անձանց՝ նրանց մեղադրելով «համասեռամոլության քարոզչության» մեջ, միաժամանակ կոչ անելով դրսևորել զրո հանդուրժողականություն և սահմանափակել այդ անձանց հնարավորությունները ինչպես մասնագիտական գործունեության, այնպես էլ այլ հասարակական ոլորտներում:

Հրապարակումների հիմքում ընկած էր «Եվրատեսիլ 2014» երգի մրցույթում Հայաստանի ներկայացուցիչներ Ինգա և Անուշ Արշակյանների հարցազրույցը, որի ընթացքում վերջիններս, արտահայտելով իրենց վերաբերմունքը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ, մասնավորապես՝ Ավստրիան ներկայացնող տրանսգենդեր արտիստ Կոնչիտա Վյուրսթի վերաբերյալ, օգտագործել էին խիստ վիրավորական և խարանող արտահայտություններ՝ համեմատելով նման երևույթները հոգեկան հիվանդության հետ:

Թերթի հրապարակումներում, բացի վիրավորական և խտրական բնույթի գնահատականներից, զուգահեռաբար հրապարակվել էին նաև թիրախավորված անձանց անձնական տվյալները, ինչը ուղեկցվել էր նրանց նկատմամբ խտրականության և անհանդուրժողականության դրսևորումների կոչերով:

Թիրախավորված անձինք՝ ընդհանուր թվով 14 անձ, Հայաստանի ներպետական դատական ատյաններում չգտնելով արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ, դիմել էին ՄԻԵԴ: Դատարանը արձանագրել է, որ ՀՀ-ը խախտել է դիմումատուների մասնավոր և ընտանեկան կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքը՝ այն դիտարկելով խտրականությունից զերծ լինելու իրավունքի հետ փոխկապակցված: Դատարանը մասնավորապես շեշտել է, որ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքը և ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված վիրավորանքի դեմ պաշտպանության միջոցները բավարար չեն անձանց հոմոֆոբ ատելության խոսքից արդյունավետ պաշտպանություն ապահովելու համար:

Եվրոպական դատարանի գնահատմամբ՝ հրապարակումների թիրախ դարձած անձանց հոգեկան ամբողջականությանը, մարդկային արժանապատվությանը և պատվին հասցված վնասը այնպիսի բնույթ և ծավալ ունի, որը չի կարող արդյունավետորեն վերականգնվել գործող քաղաքացիաիրավական մեխանիզմների միջոցով: Միաժամանակ, պետության կողմից չի ներկայացվել հիմնավորված ապացույց առ այն, որ գործող իրավական կարգավորումները

41 ՄԻԵԴ վճիռ թիվ 59180/15, Մինասյանը և այլոք ընդդեմ Հայաստանի

կիրառվում են գործնականում արդյունավետ և համակարգված կերպով:

Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռով պետության վրա դրվել է պարտավորություն՝ ձեռնարկել համապատասխան օրենսդրական, քաղաքական և գործնական միջոցներ՝ ապահովելու ատելության խոսքից, այդ թվում՝ խտրականության հրահրումից, արդյունավետ պաշտպանություն և կանխարգելման մեխանիզմների գործարկում:

ՓԻՆՔՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Սույն գործը վերաբերում է ՀՀ Մշակույթի նախարարության կողմից ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքներին վերաբերող տեղեկատվական նյութերը որպես սոցիալական գովազդ ճանաչելու դիմումի մերժմանը, ինչպես նաև այդ մերժմանն ուղղված բողոքների քննության ընթացքում դատարանների կողմից նախարարության խտրական հիմնավորումների հաստատմանը:

2017 թվականին «Փինք» ՀԿ-ը դիմել էր ՀՀ մշակույթի նախարարություն՝ խնդրելով ճանաչել իր կողմից պատրաստված երեք պաստառներն ու տեսանյութերը որպես սոցիալական գովազդ: Նյութերը ուղղված էին ԼԳԲՏ+ անձանց տեսանելիության բարձրացմանը, հավասարության և հանդուրժողականության խթանմանը և հասարակության իրազեկմանը մարդու իրավունքների ոլորտում:[42] Մշակույթի նախարարի հրամանով դիմումը մերժվել էր՝ հիմնվելով Հանրապետական հանձնաժողովի եզրակացության վրա: Վերջինս նշել էր, որ ներկայացված նյութերը չեն վերաբերում հանրային կարևորության որևէ խնդրի, չեն պարունակում սոցիալական իրազեկման տարրեր: Հանձնաժողովը նաև ընդգծել էր, որ հասարակությունն արդեն տեղեկացված է նման թեմաների մասին և հավելյալ իրազեկման անհրաժեշտություն չկա, ինչպես նաև այն, որ նյութերը փաստացի գովազդում են կոնկրետ կազմակերպություններ:

«Փինք» ՀԿ-ն վիճարկել էր մերժումը վարչական դատարանում՝ պնդելով, որ որոշումը չունի իրավական հիմնավորում և կրում է բացահայտ խտրական բնույթ: Սակայն առաջին ատյանի վարչական դատարանը մերժել էր հայցը՝ սոցիալական գովազդի հասկացությունը մեկնաբանելով չափազանց նեղ և եզրահանգելով, որ ներկայացված նյութերը չեն կարող դիտարկվել որպես սոցիալական գովազդ, քանի որ դրանք չեն վերաբերում օրենքով նախատեսված բոլոր հնարավոր սոցիալական խնդիրներին: Վերաքննիչ դատարանը 2020 թվականին արձանագրել էր, որ առաջին ատյանի դատարանը սխալ է մեկնաբանել օրենքը և գործը վերադարձրել էր նոր քննության:

Վերաքննությունից հետո, սակայն, առաջին ատյանի դատարանը կրկին մերժել էր հայցը՝ նշելով, որ նյութերը ուղղված չեն հանրային կարևորության որևէ ոլորտի, չունեն մարդու կոնկրետ իրավունքի պաշտպանության և հանրության լայն շերտերին որևէ կարևոր հարցի շուրջ տեղեկացնելու նպատակ: Դատարանը նաև եզրակացրել էր, որ նախարարության որոշումը պայմանավորված չէ սեռական կողմնորոշմամբ կամ խտրական վերաբերմունքով, իսկ դիմողը չի ապացուցել տարբերակված վերաբերմունքի փաստը:

Վերաքննիչ դատարանը 2024 թվականին հաստատել էր այս դիրքորոշումը, իսկ Վճռաբեկ դատարանը մերժել է դիմողի բողոքը զուտ տեխնիկական հիմքով՝ չանդրադառնալով գործի էությանը:

Դատավարության ընթացքում պարզվել էր, որ նույն ժամանակահատվածում սոցիալական գովազդ են ճանաչվել այլ թեմաներով նյութեր, այդ թվում՝ ընտանե-

42 ԼԳԲՏ թեմայով գովազդները սոցիալական չեն. Մշակույթի նախարարություն. https://pinkarmenia.org/news-events/lgbt-banners/

կան բռնության կանխարգելման և շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ, որոնցում առկա են հստակ արժեքային և գաղափարական ուղերձներ: Հետագա հարցումների արդյունքում նաև պարզվել է, որ վերջին տարիներին գրեթե բոլոր սոցիալական գովազդի հայտերը վերաբերում են բնապահպանական թեմաներին և մեծամասամբ հաստատվել են:

2025 թ.-ի ապրիլի 18-ին՝ ներպետական ատյաններում շուրջ 7 տարի տևած անարդյունավետ դատավարություններից հետո դիմում է ներկայացվել ՄԻԵԴ՝ պետության կողմից դրսևորված խտրականության փաստը ճանաչելու պահանջով՝ հետևյալ հիմնավորմամբ.

Պետությունը խախտել է խտրականության արգելքը՝ ամրագրված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրության 1-ին հոդվածում, թե մշակույթի նախարարության և թե դատարանների գործողությունների և որոշումների միջոցով: Մասնավորապես, տեսանյութերն ու պաստառները որպես սոցիալական գովազդ չճանաչելու որոշումը պայմանավորված չի եղել օրենսդրական պահանջներին չհամապատասխանելու հանգամանքով, այլ հիմնված է եղել այն փաստի վրա, որ ներկայացված նյութերը վերաբերում են ԼԳԲՏ+ անձանց իրավունքներին և հավասարությանը:

Մշակույթի նախարարության հիմնավորումները, ինչպես նաև դրանց հետագա վերահաստատումը դատարանների կողմից, վկայում են ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ նախապաշարմունքների վրա հիմնված մոտեցման մասին: Այդ կերպ դիմողը ենթարկվել է տարբերակված և պակաս բարենպաստ վերաբերմունքի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով, որը չի կարող համարվել օբյեկտիվորեն և ողջամտորեն արդարացված:

ՀՀ «Գովազդի մասին» օրենքը և Կառավարության համապատասխան որոշումը մշակույթի նախարարությանը և դրա ենթակայությամբ գործող հանձնաժողովին վերապահում են սոցիալական գովազդը հաստատելու կամ մերժելու հայեցողական լիազորություն: Միևնույն ժամանակ, այդ կարգավորումները չեն սահմանում հստակ չափանիշներ կամ երաշխիքներ, որոնք կկանխեին այդ լիազորության կամայական կամ խտրական կիրառումը:

Սույն գործով մշակույթի նախարարն իր որոշման մեջ չի ներկայացրել ինքնուրույն իրավական գնահատական՝ սահմանափակվելով հանձնաժողովի եզրակացության վրա հղում կատարելով: Այդ եզրակացությունն ինքնին պարունակում էր խտրական բնույթի հիմնավորումներ, որոնցից են՝

- ԼԳԲՏ+ անձանց «ոչ ավանդական սեռական կողմնորոշում ունեցող» որակումը,
- այն պնդումը, թե նման նյութերը «խթանում» կամ «գովազդում» են նույնասեռականություն,
- այն մոտեցումը, որ ԼԳԲՏ+ անձանց գոյության և իրավունքների վերաբերյալ հանրային իրազեկման անհրաժեշտություն չկա,
- ինչպես նաև այն ենթադրությունը, որ նման տեղեկատվությունը կարող է վնասակար ազդեցություն ունենալ անչափահասների վրա:

Այս հիմնավորումները ոչ միայն չեն բխում գործող օրենսդրությունից, այլ նաև ակնհայտորեն արտացոլում են հոմոֆոբ և տրանսֆոբ նախապաշարմունքներ: Սոցիալական գովազդի վերաբերյալ իրավական կարգավորումները չեն

նախատեսում «հանրային հետաքրքրության» կամ «լայն հասարակության կողմից ընդունելի լինելու» պահանջներ, և չեն թույլատրում մերժում այն հիմքով, որ տվյալ թեմայի վերաբերյալ հասարակությունն իբր արդեն տեղեկացված է:

«Փինք» ՀԿ-ի ներկայացրած նյութերը իրենց բնույթով ոչ առևտրային էին և ուղղված էին մարդու իրավունքների ոլորտում հանրային իրազեկման բարձրացմանը, ինչը համապատասխանում է սոցիալական գովազդի օրենսդրական սահմանմանը: ԼԳԲՏ+ անձանց հավասարությունն ու արժանապատվությունը միջազգային և տարածաշրջանային իրավունքի շրջանակում ճանաչված են որպես մարդու իրավունքների խնդիր:

Չնայած դրան, մշակույթի նախարարությունը հրաժարվել է ճանաչել այդ նյութերը որպես սոցիալական գովազդ՝ միևնույն ժամանակ հաստատելով այլ սոցիալական գովազդներ, այդ թվում՝ ընտանեկան բռնության կանխարգելման վերաբերյալ, որոնք նույնպես արժեքային և գաղափարական ուղերձներ էին պարունակում: Այս հանգամանքը վկայում է համադրելի իրավիճակներում տարբերակված վերաբերմունքի մասին, որը պայմանավորված է բացառապես ՍԿԳԻ հիմքով:

Տարբերակված վերաբերմունքի պարագայում պետության վրա է դրվում ապացուցման բեռը՝ ցույց տալու, որ այդ տարբերակումը հետապնդում է **օրինական նպատակ և համաչափ է**: Սույն գործով մշակույթի նախարարությունը և հետագանյում դատարանները չեն ներկայացրել որևէ օրինական նպատակ, որը կարող էր արդարացնել ԼԳԲՏ+ թեմատիկայով սոցիալական գովազդի մերժումը:

Անչափահասների պաշտպանության, հասարակական բարոյականության կամ «ավանդական արժեքների» պահպանման մասին ենթադրյալ նկատառումները չեն կարող համարվել օրինական նպատակ, քանի որ միջազգային և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը հստակ արձանագրում է, որ նման հիմնավորումները չեն կարող արդարացնել սեռական կողմնորոշման հիմքով տարբերակված վերաբերմունքը:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները, չեն անդրադարձել խտրականության բովանդակային էությանը և չեն իրականացրել արդյունավետ վերահսկողություն նախարարության որոշման նկատմամբ: Դատարանները փաստացի վերահաստատել են նախարարության նույն խտրական հիմնավորումները՝ ընդունելով այն դիրքորոշումը, որ ԼԳԲՏ+ անձանց իրավունքների վերաբերյալ իրազեկումը հանրային կարևորություն չունի և չի վերաբերում լայն հասարակությանը:

Այս մոտեցումը հակասում է ժողովրդավարական հասարակության հիմնարար արժեքներին՝ բազմակարծությանը, հանդուրժողականությանը և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև ՄԻԵԿ-ի նպատակներին:

ՀԱՐՁԱԿՈՒՄ ՇՈՒՌՆՈՒԽ ԳՅՈՒՂՈՒՄ

2018 թ. օգոստոսի 3-ին ՀՀ Սյունիքի մարզի Շուռնուխ գյուղում հանգստացող 9 երիտասարդներ, այդ թվում՝ ԼԳԲՏ+ ակտիվիստներ, ծեծի և հոգեբանական բռնության էին ենթարկվել նույն գյուղի և Գորիս քաղաքի ավելի քան 20 բնակիչների կողմից, որոնք տուժողներից պահանջել էին հեռանալ գյուղից, հարվածել էին նրանց քարերով, ձեռքերով ու ոտքերով:[43] Բռնության առնչությամբ քրեական գործ էր հարուցվել միայն ծեծի հոդվածով, և որևէ անձ չի ներգրավվել որպես մեղադրյալ: Ցուցմունքներով իրենց մեղքն ընդունած անձանց նկատմամբ կիրառվել էր համաներում և քրեական գործի վարույթը կարճվել էր: Բռնություն գործադրած անձանց մեծամասնության նկատմամբ ընդհանրապես քրեական հետապնդում չի իրականացվել, քանի որ վարույթն իրականացնող մարմինը գտել էր, որ նրանց գործողություններում հանցակազմ առկա չէ: 2019 թ. դեկտեմբերին քրեական գործով վարույթը կարճելու որոշումը տուժող կողմի բողոքի հիման վրա վերացվել էր, քրեական գործի վարույթը վերսկսվել էր: 2020 թ. ընթացքում գործով ներկայացված ևս 2 բողոքի արդյունքում դատարանները արձանագրել էին, որ վարույթն իրականացնող մարմինը քննությունը թերի է կատարել: Գործով քննության վերսկսումից հետո որևէ անձի մեղադրանք չէր ներկայացվել: ՀՀ քրեական օրենսգրքի՝ խտրականության համար պատիժ և պատասխանատվություն նախատեսող հոդվածը քննության առարկա չէր դարձվել: 2021 թ. փետրվարին վարույթն իրականացնող մարմինը կրկին որոշում էր կայացրել քրեական գործով վարույթը կարճելու մասին, այս անգամ քրեական պատասխանատվության ենթարկելու վաղեմության ժամկետն անցնելու հիմքով: Որոշումը բողոքարկվել էր վերադասության կարգով, այնուհետև՝ դատարան: 2022թ-ին դատարանը որոշում էր կայացրել տուժող կողմի բողոքը բավարարելու մասին: Դատարանն արձանագրել էր, որ վարույթն իրականացնող մարմինը կատարել է ոչ ամբողջական քննություն: Նշված որոշումը բողոքարկվել է դատախազության կողմից, սակայն ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը մերժել էր բողոքը:

2023թ-ին քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը վերացվել է Սյունիքի մարզի դատախազի կողմից, որոշումն ուղարկվել է ՀՀ ՔԿ Սյունիքի մարզային քննչական վարչություն՝ հանձնարարելով շարունակելու նախաքննությունը և վերացնելու տուժողների իրավունքների խախտումները:

2025թ-ին կրկին որոշում է կայացվել կասկածվող անձանց նկատմամբ հանրային քրեական հետապնդում չհարուցելու մասին: Որոշումը բողոքարկվել է վերադաս դատախազին, սակայն մերժվել է, հիմնավորմամբ, որ միջադեպը ծագել է փոխադարձ հայհոյանքներից և տուժողների «հակաբարոյական և հակահասարակական վարքագծից», ոչ թե նրանց սեռական կողմնորոշումից կամ գենդերային ինքնությունից, իսկ բռնությունը չի ունեցել խտրական կամ հոգեկան տառապանք պատճառելու դիտավորություն, ինչի պատճառով բացակայում

43 Մանրամասներ Շուռնուխ գյուղում տեղի ունեցած միջադեպի վերաբերյալ. https://pinkarmenia.org/news-events/shurnukh-case/

են թե՛ ատելության շարժառիթով խտրականության, թե՛ համապատասխան հանցակազմերի տարրերը:

Սյունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է տուժողների ներկայացուցիչների ներկայացրած բողոքը՝ վերացնելով դատախազի՝ քրեական վարույթ չհարուցելու մասին որոշումը: Միևնույն ժամանակ դատարանը պարտավորեցրել է քննչական մարմնին ապահովել պատշաճ, համակողմանի, արագ և առանց անհարկի ձգձգումների նախաքննություն:

Դատարանը արձանագրել է, որ նախաքննությամբ ձեռք են բերվել միմյանց հակասող փաստական տվյալներ, ընդ որում՝ այդ հակասությունները դատարանի գնահատմամբ էական են վարույթով ապացուցման ենթակա փաստական հանգամանքները, ինչպես նաև վարույթի համար նշանակություն ունեցող այլ հանգամանքները հաստատելու կամ հերքելու տեսանկյունից:

Դատարանն չի համաձայնել դատախազի այն պնդմանը, թե միջադեպը կապված չէ տուժողների գենդերային ինքնության հետ, և որ հետևաբար սույն դեպքում խոսքը չի կարող գնալ անձանց իրավահավասարության խախտման մասին:

Դատարանը նաև անհամաձայնություն է հայտնել արարքի որակման հետ, որով անտեսվել էր տուժողների սահմանադրական իրավունքների պաշտպանության շահը՝ իրավահավասարության խախտմամբ պայմանավորված: Այն նաև նշել է, որ պատշաճ գնահատման չի ենթարկել տուժողների սեռական կողմնորոշումը, նրանց գենդերային ինքնությունն ու ենթադրյալ դեպքին նախորդող և ուղեկցող հանգամանքները, այդ թվում՝ նաև վերջիններիս հասցեին հնչած խտրական արտահայտությունները, որոնք վկայում են արարքը ատելության շարժառիթով կատարված լինելու հանգամանքը:

Քննության ընթացքում թույլ տրված այս և այլ խախտումների մատնանշմանը զուգընթաց դատարանը նաև շեշտել է, որ գործը քննող մարմինը չի պահպանել քննության ողջամիտ ժամկետները, չի իրականացրել պատշաճ քննություն: Գործի նախաքննությունը այժմ կրկին շարունակվում է:

ՏՐԱՆՍ ԿՆՈՋ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁ

2018թ-ին տեղի է ունեցել տրանս կնոջ սպանության փորձ, ինչը մեծ աղմուկ է բարձրացրել, սակայն արդյունավետ քննության չի առնվել:[44] Մասնավորապես, տրանս կին Ժ. Ա.-ն մատուցել է սեռական ծառայություններ իր տղամարդ հաճախորդին: Այնուհետև տղամարդը առաջարկել է կրկին սեռական հարաբերություն ունենալ, սակայն մերժում ստանալուց հետո զայրացել է և բնակարանում վիճաբանություն սկսել տրանս կնոջ հետ: Դրանից հետո նա դուրս է եկել աստիճանահարթակ և կանխամտածված կերպով բռնել է տուժողին ու հրել աստիճաններով ներքև, ապա ձեռքերով հարվածել նրա գլխին և մարմնի տարբեր մասերին՝ փորձելով սպանել նրան:

Այնուհետև նա վերադարձել է բնակարան և, իր կատարած հանցագործության հետքերը վերացնելու նպատակով, հրկիզել է բնակարանը և հեռացել դեպքի վայրից: Գործի քննությունն իրականացնող մարմնի կողմից անցկացված հարցաքննության ընթացքում բռնարարը հայտնել է, թե կարծել է, թե հանդիպում է կնոջ հետ, եկել է սեռական հարաբերություն ունենալու, այնուհետև, տեղեկանալով, որ կինը տրանս է, զայրացել է, ինչի պատճառով տեղի է ունեցել դեպքը: Բռնության հետևանքով տրանս անձը ստացել է կյանքին վտանգ սպառնացող մարմնական վնասվածքներ: Բնակարանի հրկիզման և հանցագործության հետքերը թաքցնելու դրվագների թերի քննության արդյունքում նախաքննական մարմինը դրանք չի գնահատել հանցանքի որակման ժամանակ: Մեղադրական եզրակացությունը դատարան է ուղարկվել ծանր մարմնական վնասվածք պատճառելու մեղադրանքով:

Արդյունքում մեղադրյալը դատապարտվել է երեք տարի վեց ամիս ազատազրկման, սակայն նրա նկատմամբ կիրառվել է համաներում, և նա չի կրել ազատազրկում: Տրանս կնոջ սպանության փորձ կատարած անձը չի ենթարկվել իր արարքին համաչափ պատասխանատվության՝ գիտակցելու համար, որ իր կատարածը հանցագործություն է: Չնայած բազմաթիվ բողոքներին՝ հանցագործը պատասխանատվության չի ենթարկվել: Ներքին դատական պաշտպանության հնարավոր բոլոր միջոցները սպառելուց հետո տուժողի շահերի ներկայացուցիչը՝ «Փինք» հասարակական կազմակերպության փաստաբանը, դիմում է ներկայացրել Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Մինչ օրս որևէ հաղորդակցություն չի եղել:

44 Երևանում ծեծել են տրանսգենդեր անձին, հետո այրել նրա բնակարանը. տուժածը հոսպիտալացվել է. https://tert.am/am/news/2018/02/28/Transgender/2626572

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, կարելի է փաստել, որ ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ խտրականության և բռնության դեպքերը քանակապես չեն նվազել: Իրավախախտումների բնույթը ևս չի տարբերվում վերջին մի քանի տարիների կտրվածքով դիտվող իրավախախտումներից: Շարունակում է մտահոգիչ մնալ ընտանեկան բռնության դեպքերի գերակշռումը փաստագրված դեպքերի շարքում, ներառյալ՝ անչափահաս անձանց նկատմամբ: Արձանագրված դեպքերի վերլուծությունը նաև ցույց է տալիս, որ ԼԳԲՏ+ անձինք կարող ավելի խոցելի լինել տարբեր միջավայրներում՝ կախված իրենց գենդերից: Օրինակ, կին նույնասեռական կամ բիսեքսուալ անձինք առավելապես բախվում են ընտանեկան բռնության, ինչը կարող է տարբեր դրսևորումներ ունենալ, հոգեբանական ու տնտեսական բռնությունից մինչև առավել ծանր՝ ֆիզիկական, սեռական բռնության տեսակներ, ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշումը փոխելու նպատակով: Կնոջ գենդերային դերի վերաբերյալ պատկերացումները, փաստացի, առավել սրված կերպով ու գործնականում պարտավորվեցվում են ընտանիքների կողմից:

Միևնույն ժամանակ, հանրային տարածքներում առավել խոցելի են նույնասեռական կամ բիսեքսուալ տղամարդիկ, ում կողմից իրենց գենդերի վերաբերյալ հասարակական ընկալումներին անհամապատասխան ինքնարտահայտումը՝ վարքագիծն ու արտաքինը, հասարակության որոշ խմբեր չեն հանդուրժում: Այսպիսով, հաճախ նրանք ենթարկվում են ֆիզիկական բռնության դրսում՝ անծանոթ անձանց կողմից, ինչպես նաև աշխատավայրում, կրթական հաստատություններում և այլն: Բնականաբար, արական սեռի անձանց համար առանձնահատուկ խնդիր է զորակոչի և զինծառայության ընթացքը, որտեղ տարբեր տեսակի իրավախախտումների կարող ենք ականատես լինել: Տղամարդկանց շրջանում նաև առավել տարածված է անձնական կյանքին վերաբերող տեսանյութերի, լուսանկարների տարածման սպառնալիքների և շորթման դեպքերը՝ պայմանավորված նույնասեռական անձանց ծանոթության կայքերի առավել տարածվածությամբ, ինչի միջոցով հնարավոր է լինում անանուն մնալով անձից ստանալ իր սեռական կողմնորոշմանը վերաբեող տեղեկություններ, հետագայում նաև հանդիպել և բացահայտել նրա ինքնությունը: Իհարկե, սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկությունների տարածման սպառնալիքների հանդեպ խոցելի են բոլորը՝ անկախ սեռից և գենդերային ինքնությունից, քանի որ դա բացում է տարբեր տեսակի բռնության և խտրականության շղթա՝ թե ընտանիքում, թե այլ հասարակական հարաբերություններում:

Տրանս կանայք առավել խոցելի են թե խտրականության, թե բռնության նկատմամբ: Առավել տեսանելի գենդերային ինքնությամբ անձը կարող է հեշտությամբ զրկվել թե կրթության, թե աշխատանքի հնարավորությունից՝ հայտնվելով սոցիալապես դժվար կացության մեջ: Տրանս կանայք առավել հաճախ են զբաղվում սեռական ծառայությունների տրամադրմամբ, ինչը նրանց վտանգում է թե դրսում, թե տանը:

Միևնույն ժամանակ, պետությունը առավել համագործակցային է մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնող միջազգային մեխանիզմների հետ, չնայած նրան, որ ոչ օրենսդրական և ոչ էլ քաղաքականությունների կամ հանրային հաղորդակցության մակարդակով ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության առումով որևէ տեսանելի բարելավում տեղի չի ունեցել: Այնուամենայնիվ, դրական ենք գնահատում պետական հաշվետու լիազոր մարմինների արձագանքը միջազգային կառույցներին առ այն, որ խտրականությունից և ատելության հիմքով հանցա-

գործություններից անձանց պաշտպանելու ուղղությամբ որոշակի միջոցներ ձեռնարկվում են, թեև խոսքը ուղղակիորեն ԼԳԲՏ+ համայնքին չի վերաբերվում:

Ինչպես մանրամասնորեն նկարագրվեց զեկույցի երկրորդ բաժնում, իրավակիրառ մարմինների մոտեցումներում և պրակտիկայում առկա են համակարգային խնդիրներ, որոնք մեծ ազդեցություն են ունենում ԼԳԲՏ+ անձանց կողմից իրավական պաշտպանության միջոցների նկատմամբ վստահության վրա: Եվ չնայած նրան, որ պատճառները կապված են արմատավորված անհանդուրժող և խտրական վերաբերմունքի, նախապաշարմունքների, ինչպես նաև օրենսդրական խոչընդոտների հետ, գտնում ենք, որ քաղաքական կամքի առկայության պարագայում հնարավոր է քայլ առ քայլ մոտենալ այդ խնդիրների լուծմանը:

Մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ պետական մարմինների կողմից որևէ տեսակի հանրային արձագանք չեն ստանում ԼԳԲՏ+ անձանց իրավունքների ոտնահարումների դեպքերը, հատկապես խոսքը վերաբերում է հրապարակայնորեն արտահայտվող ատելություն ու անհանդուրժողականություն սերմանող խոսքին: Տարվա ընթացքում թե ընդդիմադիր քաղաքական ուժերի, թե իշխող քաղաքական ուժի ներկայացուցիչների և նրանց հարող լրատվամիջոցների կողմից տարածվել են ԼԳԲՏ+ անձանց և նրանց հետ ասոցացվող անձանց թիրախավորող նյութեր՝ նպատակ ունենալով հասարակության հոմոֆոբ և տրանսֆոբ տրամադրությունները օգտագործել որևէ անձի վարկաբեկելու նպատակով: Այսինքն, իշխանությունները ոչ միայն չեն դատապարտում նման քաղաքական շահարկումները, այլ նաև իրենք ձեռնպահ չեն մնում նման գործելաոճից, ինչը հղի է հասարակության տարբեր խմբերի կողմից ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ անհանդուրժող վերաբերմունքն էլ ավելի սրելու վտանգով:

Ստորև ներկայացված առաջարկները հիմնված են «Փինք» իրավապաշտպան ՀԿ-ի փորձառության և մասնագիտական ուսումնասիրությունների վրա և ուղղված են զեկույցում վեր հանված թե օրենսդրական և թե գործնական խնդիրների լուծմանը: Այնուամենայնիվ, կարևոր է հաշվի առնել, որ դրանք արդյունավետ կարող են գործի դրվել և բարելավել ԼԳԲՏ+ անձանց պաշտպանվածության մակարդակը բացառապես պետական բարձրագույն մարմինների քաղաքական կամքի դրսևորման պարագայում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԳԲՏ+ անձանց իրավունքների առավելագույն պաշտպանությունը ՀՀ-ում ապահովելու համար առաջարկում ենք.

Պետական մարմիններին և քաղաքական ուժերին

- Հանրային կյանքի տարբեր ոլորտներում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությունն ու բռնությունը կանխելու ուղղությամբ քայլեր նախատեսել Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրում:
- Ընդունել խտրականության դեմ համապարփակ օրենք, որով կսահմանվի խտրականությունը, դրա տեսակները, խտրականության դեպքերի քննության ընթացակարգային առանձնահատկությունները, կնախատեսի պաշտպանված հատկանիշների ընդգրկուն ցանկ՝ ներառյալ սեռական կողմնորոշումը և գենդերային ինքնությունը, հասարակական կազմակերպությունների համար՝ հանրային շահի պաշտպանության գործերով իրավասուբյեկտություն, ինչպես նաև անկախ հավասարության մարմնի ձևավորման և գործունեության ընթացակարգ:
- Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես՝ նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք:
- Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, ՀՀ Քրեական օրենսգրքի բռնության կոչերի համար պատասխանատվություն նախատեսող դրույթում կատարել լրացում՝ որպես պաշտպանված հատկանիշ նախատեսելով նաև սեռական կողմնորոշումն ու գենդերային ինքնությունը:
- Փաստագրել և վարել ՀՀ-ում ատելության հիմքով հանցագործությունների, ներառյալ՝ անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունների վիճակագրություն՝ տեսանելի դարձնելով ատելության հիմքով հանցագործությունների խնդիրը ՀՀ-ում:
- Ապահովել արդարադատության մատչելիությունը ատելության հիմքով հանցագործություններից տուժած անձանց համար, մասնավորապես, նախատեսելով անձի իրավունքների պաշտպանության արդյունավետ մեխանիզմներ, որոնք կբացառեն անձի կրկնազոհացման վտանգը, կապահովեն անձի անվտանգությունը և կնախատեսեն վնասների հատուցման համընդգրկուն մեխանիզմներ:
- Դրսևորել քաղաքական կամք՝ արդյունավետ կիրառելու համար առկա օրենսդրությունը սեռական կողմնորոշմամբ և/կամ գենդերային ինքնությամբ պայմանավորված ատելության հիմքով հանցագործությունների և ատելության խոսքի նկատմամբ:

- ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների ոտնահարումներին անդրադառնալիս տալ հստակ գնահատականներ, չխուսափել մարդու իրավունքների ոտնահարումները դատապարտելուց:
- Իրականացնել իրավակիրառ մարմինների վերապատրաստում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների քննության նյութաիրավական և ընթացակարգային առանձնահատկությունների շուրջ՝ ապահովելու համար ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն:
- Շարունակական կազմակերպել և իրականացնել դասընթացներ իրավակիրառ մարմինների հետ՝ ատելության հիմքով հանցագործությունների և ընտանեկան բռնության ենթարկված անձանց և վկաների հետ աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:
- Համագործակցել իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ՝ ստանալու համար առավել մանրակրկիտ տեղեկություն ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների համակարգային բնույթ կրող ասպեկտների մասին:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները պետական մարմինների ծառայողների, մասնավորապես՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում:
- Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես՝ հրապարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով և դատապարտել բռնության և անհանդուրժողականության որևէ դրսևորում:
- Կրթական հաստատությունների վարչակազմի և ուսուցչական կազմի համար իրականացնել պարբերական վերապատրաստումներ սեռականության, ԼԳԲՏ+ անձանց հետ զգայուն մոտեցման, նրանց համար բարդ տարիքային փուլում ինքնաճանաչմանը և ինքնադրսևորմանը աջակցելու վերաբերյալ:
- Վերահսկողություն իրականացնել դպրոցներից դուրս գալու կամ տեղափոխվելու դեպքերի նկատմամբ՝ պարզելու համար պատճառները և հնարավոր ճնշումների դեպքերը:
- Իրականացնել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ընտանեկան բռնության պարագայում իրավապահ մարմինների կողմից զգայուն վերաբերմունքի մշտադիտարկում:
- Վարել սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ընտանեկան բռնության դեպքերի վիճակագրություն:
- Ձեռնպահ մնալ քաղաքական ընդդիմախոսներին վարկաբեկելու նպատակով ԼԳԲՏ+ հարցերի շահարկումից, և որպես ԼԳԲՏ+ անձանց թիրախավորումից,
- Դատապարտել քաղաքական գործիչների և լրատվամիջոցների կողմից ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ անհանդուրժողականության սերմանումը ու անձանց՝ իրենց ենթադրյալ նույնասեռական կողմնորոշման կամ

ԼԳԲՏ+ անձանց պաշտպանության հետ կապված գործունեությամբ պայմանավորված թիրախավորումից:

Զանգվածային լրատվության միջոցներին

- Դադարեցնել ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրապարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ+ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող նյութեր:
- Չշահարկել ԼԳԲՏ+ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:
- Չտարածել պաշտոնատար անձանց և այլ գործիչների կողմից հնչած ատելություն, անհանդուրժողականություն, թշնամանք, բռնության կամ խտրականության կոչ կամ արդարացում պարունակող խոսքը:

Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին

- Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ+ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ+ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ+ անձանց իրավունքների խախտումների ձևավորված պրակտիկային:
- Պետությունից պահանջել հստակ տեղեկատվություն հասարակական կազմակերպությունների կողմից տրամադրված մտահոգիչ գործերի քննության ընթացքի և ձեռնարկվող միջոցառումների վերաբերյալ:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը ԼԳԲՏ+ անձանց նկատմամբ խտրականության և դրանից բխող բացասական հետևանքների մասին, խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների վերաբերյալ:

- Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության խոսքի և դրա քարոզչության հակաօրինականության մասին:
- Իրականացնել ջատագովություն խտրականության կանխարգելման և խտրականությունից պաշտպանության մասին արդյունավետ օրենք արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև՝ այլ իրավական փաստաթղթերում ԼԳԲՏ+ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու համար:
- ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների ոտնահարումների հայտնի դեպքերում հանդես գալ հրապարակային դատապարտող հայտարարությամբ, պատշաճ արձագանքել ահազանգերին:

Կազմակերպության մասին

«Փինք» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հիմնադրվել է 2007 թ.-ին, որը ԼԳԲՏ+ (լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանս և այլ ոչ հետերոնորմատիվ ինքություններով անձանց) համայնքահեն կազմակերպություն է, ստեղծվել է ԼԳԲՏ+ անձանց կողմից, ծառայում և աջակցում է համայնքի կարիքներին, ինչպես նաև խթանում է ԼԳԲՏ+ անձանց մարդու իրավունքների պաշտպանության գործընթացը ու ջատագովում ԼԳԲՏ+ հարցերի շուրջ հանրային քաղաքականության փոփոխությանը:

PINK ARMENIA

«Փինք» իրավապաշտպան
հասարակական կազմակերպություն

info@pinkarmenia.org
+374 60 377277
pinkarmenia.org